



Հայաստանի Հանրապետության  
կենտրոնական բանկ



# Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ

Տարեկան հաշվետվություն  
2007

## *Հարգելի բնույթող*

**2008** թվականի հունվարի 1-ից ուժի մեջ են մտել «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ և 17-րդ հոդվածների դրույթները, որոնց համաձայն՝ փոխվել են ՀՀ կենտրոնական բանկի կողմից ներկայացվող հաշվետվությունների ձևաչափերը և կառուցվածքը:

Նախկինում ներկայացվող «ՀՀ կենտրոնական բանկի տարեկան հաշվետվությունը» ներառում էր գնաճի և ֆինանսական կայունության մասին հաշվետվությունները, ՀՀ կենտրոնական բանկի ֆինանսական հաշվետվությունը և կառավարման հաշվետվությունը, ինչպես նաև վիճակագրական հավելված:

Օրենքի նոր պահանջների համաձայն՝ գնաճի հաշվետվությունը ներկայացվելու է եռամսյակային պարբերականությամբ հրապարակվող «Հայաստանի Հանրապետության դրամավարկային քաղաքականության ծրագիր», «Գնաճի հաշվետվություն» պարբերականում, որը, ըստ «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» օրենքի, տարեկան երկու անգամ ներկայացվելու է Ազգային ժողով: Բացի այդ, տարեկան պարբերականությամբ հրատարակվելու են «Ֆինանսական կայունության հաշվետվությունը» և «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի վիճակագրական տեղեկագիրը»:

Չեզ ներկայացվող «ՀՀ կենտրոնական բանկի տարեկան հաշվետվությունը» ներառում է.

- Կենտրոնական բանկի կառավարումը
- Միջազգային պահուստների մակարդակը և կառավարումը
- Կանխիկ դրամաշրջանառությունը
- Առևտրային կազմակերպությունների վարկանշումը
- Փողերի «զվացման» և ահարեկչության ֆինանսավորման դեմ պայքարը
- Այլ դրույթներ
- Կենտրոնական բանկի տարեկան ֆինանսական հաշվետվությունը:

Քանի որ «ՀՀ կենտրոնական բանկի տարեկան հաշվետվությունը» նոր ձևաչափով հրապարակում է առաջին անգամ, ակնկալում ենք շահագրգիռ կողմերի կարծիքներն ու առաջարկները, որոնք կնպաստեն հանրությանը ներկայացվող հաշվետվության բարելավմանն ու կատարելագործմանը:

**ՀՀ կենտրոնական բանկի խորհուրդ**

## Բովանդակություն

Կենտրոնական բանկի խնդիրները .....	5
2007 թվականի արդիական խնդիրները .....	6
Կենտրոնական բանկի կառավարումը .....	8
ԿԲ կառուցվածքը .....	12
Դասարակայնության հետ կապեր .....	17
Անձնակազմի կառավարում.....	18
Միջազգային համագործակցություն .....	20
Ներքին առողջություն .....	21
Դրամավարկային քաղաքականությունը .....	23
ՀՀ ֆինանսական համակարգը .....	24
ՀՀ վճարահաշվարկային համակարգը .....	26
Միջազգային պահուստների մակարդակը և կառավարումը .....	27
Կանխիկ դրամաշրջանառությունը .....	30
Առևտրային կազմակերպությունների վարկանշում .....	34
Փողերի «ԼՎացման» և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարը .....	35
2008 թվականի արդիական խնդիրները .....	36
ՀՀ ԿԲ տարեկան ֆինանսական հաշվետվություն .....	39

## ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՍԿԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

«ՀՀ կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ ՀՀ կենտրոնական բանկի հիմնական խնդիրը Հայաստանի Հանրապետությունում գների կայունությունն ապահովելն է: Իր հիմնական խնդիրն իրագործելու նպատակով ՀՀ կենտրոնական բանկի գործառույթն է հանդիսանում գների կայունության ապահովմանն ուղղված միջոցների ձեռնարկումը:

ՀՀ կենտրոնական բանկի խնդիրներն են՝

- Հայաստանի Հանրապետության ֆինանսական համակարգի կայունության և բնականոն գործունեության ապահովումը, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության բանկային համակարգի կայունության, իրացվելիության, վճարունակության և բնականոն գործունեության համար անհրաժեշտ պայմաններ ապահովելը.
- գործուն վճարահաշվարկային համակարգ ստեղծելն ու զարգացնելը.
- Հայաստանի Հանրապետության արժույթի քողարկումը, դրամաշրջանառության կազմակերպումը և կարգավորումը.
- հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի կազմակերպումն ու կարգավորումը.
- արժեթղթերում ներդրողների պաշտպանության, շուկայում արժեթղթերի արդար գնագոյացման համակարգի ձևավորման ու պահպանման, արժեթղթերի արդար, թափանցիկ և վստահելի շուկայի կանոնակարգված և բնականոն գործունեության և զարգացման համար անհրաժեշտ պայմանների ապահովումը:

Իր հիմնական խնդիրն իրագործելու նպատակով ՀՀ կենտրոնական բանկը մշակում, հաստատում և իրականացնում է դրամավարկային քաղաքականության ծրագրերը: Այլ խնդիրներն իրագործելու նպատակով Կենտրոնական բանկը՝

- իրականացնում է կառավարության բանկային սպասարկումը.
- հանդիսանում է կառավարության ֆինանսական գործակալն ու խորհրդատուն.
- լիցենզավորում է բանկերը, օրենքով նախատեսված դեպերում՝ նաև այլ անձանց, կարգավորում և վերահսկում է դրանց գործունեությունը.
- որպես վերջին ատյանի վարկատու՝ վարկեր է տրամադրում բանկերին.
- կարգավորում և վերահսկում է վճարահաշվարկային համակարգի, այդ թվում՝ վճարահաշվարկային ծառայություններ մատուցող կազմակերպությունների, որոնք բանկ չեն, գործունեությունը.
- տիրապետում, օգտագործում և տնօրինում է Հայաստանի Հանրապետության միջազգային պահուստները.
- իրականացնում է դրամավարկային և ֆինանսական համակարգի վիճակագրության հավաքագրումը, ամփոփումը և իրապարակումը.
- իրականացնում է հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացման և ահաբեկչության ֆինանսավորման վերաբերյալ տեղեկությունների հավաքագրումը, համակարգումն ու վերլուծությունը, տեղեկությունների փոխանակումը և տրամադրումը ներաբետական իրավասու մարմիններին և միջազգային կազմակերպություններին, իսկ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով նախատեսված դեպերում՝ նաև այլ պետությունների իրավասու մարմիններին:

Եթե ՀՀ կենտրոնական բանկի մյուս խնդիրները հակասում են իր հիմնական խնդրին, ՀՀ կենտրոնական բանկն առաջնություն է տալիս հիմնական խնդրին և ղեկավարվում է դրա իրագործման անհրաժեշտությամբ:

## 2007 ԹՎԱԿԱՆԻ ԱՐԴԻՎԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

«ՀՀ

կենտրոնական բանկի համար 2007թ. արդիական են համարվել հետևյալ խնդիրները.

- Գնաճի նպատակային թիրախը ապահովելու նպատակով բարձրացնել դրամավարկային քաղաքականության առնչվող որոշումների ընդունմանը նպաստող գործընթացների որակը և արդյունավետությունը, խորությանը ուսումնասիրել գնաճի բնույթը և նպաստել գնաճի նպատակադրության կատարելագործմանը<sup>1</sup>:
- Միջազգային պահուստների կառավարման ոլորտում անցնել կառավարման առավել արդյունավետ՝ եռամակարդակ համակարգի, ինչը հնարավորություն կտա ֆինանսական շուկաների բարձր տատանողականության պարագայում իրականացնել միջազգային պահուստների օպտիմալ ներդրումներ և ռիսկի ընդունելի մակարդակի պայմաններում ապահովել եկամտաբերության աննախադեպ բարձր մակարդակ:
- Ներդնել նոր վերահսկողական համակարգ, ըստ որի պետք է հստակ տարանջատվեն կանխարգելիք (prudential), շուկայական վարչելակարգի պահպաննամ (market conduct) և սպառողների շահերի պաշտպանությանը ուղղված կարգավորման և վերահսկողական գործընթացները:
- ՀՀ ապահովագրական ոլորտի օրենսդրությունը համապատասխանեցնել Եվրոպական և Ապահովագրողների վերահսկող մարմինների միջազգային ասոցիացիայի կողմից նշանակած ստանդարտներին: Ապահովագրական շուկայի բնականոն գործունեության համար անհրաժեշտ ինստիտուտների՝ ակտուարների, ապահովագրական դեպքերի գործունեցման և գնահատման ենթակառուցվածքների ներդրում և դրան գուգահեռ, համարժեք վերահսկողության և կարգավորման դաշտի ձևավորում:
- Շվեդական բորսայի օպերատոր Օ-Էն-Էքս-ի (OMX) հետ իրականացնել Հայաստանի արժեթղթերի շուկայի զարգացման հեռանկարների ուսումնասիրության և զարգացման առաջարկությունների ծրագիրը: Տվյալ ծրագրի առաջնային խնդիրներն են՝ Հայաստանի ֆոնդային բորսայի և Կենտրոնական դեպոզիտարիայի առևտրայնացումը և արժեթղթերի շուկա բանկերի ու վարկային կազմակերպությունների ուղղակի մուտքի թույլատրումը:
- Շարունակել ակտիվ մասնակցությունը կենսաթոշակային համակարգի բարեփոխումների հետ կապված աշխատանքներին<sup>2</sup>:
- ՀՀ վճարահաշվարկային համակարգի զարգացումը իրականացնել 3 հիմնական ուղղություններով.
  - անկանխիկ վճարումների զարգացում,
  - վճարային համակարգերի հսկողության աշխատանքների ապահովում,
  - վճարահաշվարկային կազմակերպությունների գործունեության իրավական դաշտի կատարելագործում:
- Շարունակելով ամբողջությամբ ապահովել կանխիկ դրամի նկատմամբ տնտեսության պահանջը (ըստ յուրաքանչյուր անվանական արժեքի):

<sup>1</sup> Խնդրի իրականացման վերաբերյալ հաշվետվությունը ներկայացվում է եռամսյակը մեկ ՀՀ կենտրոնական բանկի կողմից թողարկվող «ՀՀ դրամավարկային քաղաքականության ծրագիր» և «Գնաճի հաշվետվություն» պարբերականում:

<sup>2</sup> Խնդրի իրականացման վերաբերյալ հաշվետվությունը ներկայացվում է «ՀՀ կենտրոնական բանկի բանբեր» եռամսյա պարբերականում, «Հայաստանի ֆինանսական համակարգը զարգացումը, կարգավորումը, վերահսկողությունը» տարեկան հաշվետվությունում և «Ֆինանսական կայունության հաշվետվությունում»:

- Կանխիկ դրամաշրջանառության կազմակերպման և կարգավորման նպատակով նշակել ՀՅ կանխիկ դրամաշրջանառության համակարգի զարգացման հայեցակարգը:
- Շարունակել միջազգային ծրագրերի շրջանակում ՀՅ կենտրոնական բանկի հուշադրամների թողարկման գործընթացը:
- Զարգացնել Հայաստանի Հանրապետությունում անկանխիկ վճարումների համակարգը, այդ թվում՝ նշակել «Կանխիկ գործառնությունների սահմանափակման մասին» ՀՅ օրենքի նախագիծ<sup>3</sup>:
- Իրականացնել կրթական ծրագրեր տնտեսական թեմաներ լուսաբանող լրագրողների և համրակրթական դպրոցներում տնտեսագիտություն դասավանդող ուսուցիչների համար, ինչպես նաև ընդհանուր ուղղվածության կրթական ծրագրեր՝ ֆինանսատնտեսական ոլորտի վերաբերյալ բնակչության տեղեկացվածության մակարդակը բարձրացնելու նպատակով:
- Ապահովել ՀՅ կենտրոնական բանկում անձնակազմի կառավարման համակարգի ամբողջականությունը և կառավարման գործընթացների առավել արդյունավետ իրականացումը:
- Ընդլայնել ՀՅ կենտրոնական բանկի կողմից վարկանշված առևտրային կազմակերպությունների թիվը և կատարելագործել ՀՅ կենտրոնական բանկի կողմից կազմակերպությունների վարկանշնան մեթոդաբանությունը:
- Զարգացնել Ֆինանսական դիտարկումների կենտրոնի՝ որպես ֆինանսական հետախուզություն իրականացնող ազգային մարմնի ինստիտուցիոնալ և ֆունկցիոնալ կարողությունները՝ հիմնված աշխարհի լավագույն փորձի վրա:

ՀՅ կենտրոնական բանկի կողմից 2007թ. իրականացված աշխատանքները համահունչ են ՀՅ կենտրոնական բանկի զարգացման տեսլականին:

<sup>3</sup> Խմբորի իրականացման վերաբերյալ հաշվետվությունը ներկայացվում է «ՀՅ կենտրոնական բանկի բանկեր» եռամսյա պարբերականում, «Հայաստանի ֆինանսական համակարգը. զարգացումը, կարգավորումը, վերահսկողությունը» տարեկան հաշվետվությունում և «Ֆինանսական կայունության հաշվետվությունում»:

## ՀՅ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

«ՀՅ

կենտրոնական բանկի մասին» ՀՅ օրենքով սահմանված է, որ Կենտրոնական բանկի կառավարման բարձրագույն մարմինը ՀՅ կենտրոնական բանկի խորհուրդն է:

Խորհուրդը կազմված է ՀՅ կենտրոնական բանկի նախագահից, նրա տեղակալից և հինգ անդամներից: ՀՅ կենտրոնական բանկի նախագահը և նրա տեղակալը ՀՅ կենտրոնական բանկի խորհուրդի կազմում ընդգրկվում են ի պաշտոնե:

ՀՅ կենտրոնական բանկի բարձրագույն պաշտոնատար անձը ՀՅ կենտրոնական բանկի նախագահն է: Կենտրոնական բանկի նախագահը նշանակվում է ՀՅ նախագահի առաջարկությամբ՝ ՀՅ Ազգային ժողովի կողմից՝ վեց տարի ժամկետով և պատասխանատու է ՀՅ կենտրոնական բանկի խնդիրների իրագործման համար: ՀՅ կենտրոնական բանկի նախագահը կողրդինացնում է ՀՅ կենտրոնական բանկի բնականոն աշխատանքը, ներկայացնում է ՀՅ կենտրոնական բանկը Հայաստանի Հանրապետությունում, այլ պետություններում և միջազգային կազմակերպություններում, իրականացնում է օրենքով ՀՅ կենտրոնական բանկի խորհուրդի իրավասությանը չվերապահված այլ լիազորություններ: ՀՅ կենտրոնական բանկի նախագահի բացակայության կամ պարտականությունների կատարման անհնարինության դեպքում նրան փոխարինում է ՀՅ կենտրոնական բանկի նախագահի տեղակալը, իսկ տեղակալի բացակայության կամ պարտականությունների կատարման անհնարինության դեպքում Կենտրոնական բանկի խորհուրդի տարիքով ավագ անդամը: ՀՅ կենտրոնական բանկի նախագահի տեղակալին նշանակում է ՀՅ նախագահը՝ վեց տարի ժամկետով: ՀՅ կենտրոնական բանկի նախագահը և նրա տեղակալը, ինչպես նաև խորհուրդի անդամները չեն կարող լինել որևէ կուսակցության դեկավար մարմնի անդամ, կատարել այլ աշխատանք, բացի գիտական, մանկավարժական, ստեղծագործական աշխատանքից:

Կենտրոնական բանկի խորհուրդի մյուս հինգ անդամներին նշանակում է Հայաստանի Հանրապետության նախագահը՝ հինգ տարի ժամկետով: ՀՅ կենտրոնական բանկի խորհուրդի անդամները չեն կարող Կենտրոնական բանկում այլ պաշտոն զբաղեցնել:

### ՀՅ կենտրոնական բանկի խորհուրդ

ՀՅ կենտրոնական բանկի խորհուրդը նիստերը գումարվում են ըստ ամիրաժշտության՝ նախագահի, նրա տեղակալի կամ խորհուրդի առնվազն երեք անդամի պահանջով, բայց ոչ պակաս, քան ամիսը մեկ անգամ: ՀՅ կենտրոնական բանկի խորհուրդը հաստատում է ՀՅ կենտրոնական բանկի կանոնադրությունը, Հայաստանի Հանրապետության դրամավարկային քաղաքականության ծրագիրը, ՀՅ կենտրոնական բանկի կողմից իրականացվող բաց շուկայական գործառնությունների, տրամադրվող վարկերի և ներգրավվող ավանդների սահմանաքանակներն ու տոկոսադրույթները, ՀՅ կենտրոնական բանկում պարտադիր պահուստավորում իրականացնելու կարգը և պայմանները, ընդունում է ՀՅ կենտրոնական բանկի նորմատիվ ակտերը, օրենքով սահմանված կարգով տալիս է բանկային գործունեության և այլ լիցենզիաներ, ուժը կորցրած կամ անվավեր է ճանաչում դրանք, սահմանում է բանկերի և այլ անձանց լիցենզավորման կարգը, հաստատում է բանկերի գործունեությունը կարգավորող նորմատիվները և դրանց հաշվարկման կարգը, իրականացնում է օրենքով նախատեսված այլ լիազորություններ:

ՀՅ կենտրոնական բանկի խորհուրդը 2007թ. գումարել է 56 նիստ և ընդունել 439 որոշում, որից 109-ը նորմատիվային որոշումներ են (ֆինանսական համակարգի գործունեությունը կարգավորող կանոնակարգերի հաստատման, գործող կարգերում փոփոխությունների և լրացումների կատարման /76 որոշում/, ՀՅ կենտրոնական բանկի կողմից հուշադրամներ և դրամանիշեր շրջանառության մեջ դնելու /8 որոշում/, ապահովագրական ընկերությունների գործունեությունը կարգավորող նորմատիվ ակտերի սահմանման /19 որոշում/, արժեքթերի շուկայի գործունեության տնտեսական նորմատիվների /3 որոշում/, բանկային տոկոսի հաշվարկային դրույթի սահմանման /3 որոշում/ մասին), 330-ը՝ անհատական (դրամական փոխանցումների իրականացնելու և վճարահաշվարկային համակարգում մասնակցության թույլտվություն տրամադրելու /34 որոշում/, ֆինանսական շուկայում Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի գործառնությունների տոկոսադրույթների /12 որոշում/, ԿԲ կողմից թողարկվող հուշադրամների ուրվագծերը հաստատելու /4 որոշում/, Հայաստանի Հանրապետության միջազգային պահուստների վիճակի և կազմի վերաբերյալ տեղեկատվության /3 որոշում/, արտարժույթի առուվաճառքի գործառնությունների իրականացնելու լիցենզիա տրամադրելու կամ ուժը կորցրած ճանաչելու /67 որոշում/, բանկային, բորբերային, դիլերային գործունեություն իրականացնելու լիցենզիա տրամադրելու /26 որոշում/, մասնագիտական որակավորում շնորհելու /12 որոշում/, գրավատների /21 որոշում/, վարկային կազմակերպությունների /23 որոշում/, Հայաստանի ֆոնդային բորսայի /19 որոշում/, Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիայի /8 որոշում/, ապահովագրական ընկերությունների /13 որոշում/, ՀՅ ԿԲ ծախսերի նախահաշվի և կապիտալ ներդրումների ծրագրի կատարողականը հաստատելու /3 որոշում/, ՀՅ ԿԲ ֆինանսական դիտարկումների կենտրոնի վարքագծի կանոնները հաստատելու, կանոնադրության մեջ լրացումներ կատարելու, կենտրոնի և վերստուգիչ խմբի աշխատանքային ծրագրերի հաստատման, անդամների նշանակման և ազատման /28 որոշում/ մասին և 57 այլ որոշումներ):

### ՀՅ կենտրոնական բանկի վարչություն

ՀՅ կենտրոնական բանկի վարչությունը ՀՅ կենտրոնական բանկի նախագահին առընթեր խորհրդակցական մարմին է, որն իր գործունեությունն իրականացնում է նիստերի միջոցով։ Նիստերը, որպես կանոն, գումարվում են երկու շաբաթը մեկ անգամ խորհրդի հերթական նիստերի գումարման օրվան հաջորդող չորեքշաբթի օրը։

Վարչության նիստերը վարում է ՀՅ կենտրոնական բանկի նախագահը, իսկ վերջինիս բացակայության դեպքում՝ ՀՅ կենտրոնական բանկի նախագահի տեղակալը։

Վարչության անդամների կողմից խորհրդի նիստում քննարկվելիք հարցերը ներկայացվում են ՀՅ կենտրոնական բանկի վարչություն։

2007 թ. գումարվել է ՀՅ կենտրոնական բանկի վարչության 28 նիստ։

### Դրամավարկային քաղաքականության կոմիտե

Դրամավարկային քաղաքականության կոմիտեի գործառություններն են՝ նախորդ շաբաթվա ընթացքում իրականացված դրամավարկային քաղաքականության, բանկային համակարգում, ֆինանսական շուկայում ձևավորված իրավիճակի, ՀՅ կենտրոնական բանկի գործառնությունների, ինչպես նաև դրամավարկային և պետական բյուջեի հետ փոխհարաբերություններին առնչվող ցուցանիշների քննարկումը։

Դրամավարկային քաղաքականության կոմիտեն քննարկում է նաև նախորդ տասնօրյակում գնածի գնահատումների վերաբերյալ ՀՀ կենտրոնական բանկի վիճակագրության վարչության և Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության դիտարկումների արդյունքները:

Դրամավարկային քաղաքականության կոմիտեի նիստերը գումարվում են ՀՀ կենտրոնական բանկում, ամեն ուրբաթ:

2007 թ. տեղի է ունեցել Դրամավարկային քաղաքականության կոմիտեի 51 նիստ:

### **Ներդրումային հանձնաժողով**

Ներդրումային հանձնաժողովն իր լիազորությունների սահմաններում որոշումներ կայացնելու իրավասություններ ունեցող հանձնաժողով է, որը, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի միջազգային պահուստների կառավարման վերաբերյալ խորհրդի որոշումներին համապատասխան, իրականացնում է միջազգային պահուստների կառավարման որոշումների ընդունման և դրանց կատարման վերահսկողության գործառություններ, ինչպես նաև քննարկում է ներդրումային գործունեության ընթացիկ կոռորդինացման առնչվող խնդիրները և ֆինանսական վերլուծության արդյունքները:

Հանձնաժողովի նիստերը, որպես կանոն, գումարվում են ամիսը մեկ անգամ, որտեղ քննարկվում են՝ ՀՀ միջազգային պահուստների կառավարման կատարողականները, ակտիվների ռազմավարական տեղաբաշխման նախն խորհրդի որոշման նախագծերը, ՀՀ միջազգային պահուստների կազմի և կառուցվածքի մասին տեղեկանքները, միջազգային ֆինանսական շուկաներում առկա միտունների վերլուծության և վերջիններիս զարգացման հնարավոր ուղղությունների կանխատեսումների վերաբերյալ և այլ հարցեր:

2007 թ. գումարվել է Ներդրումային հանձնաժողովի 15 նիստ:

### **Լիցենզավորման և վերահսկողության հանձնաժողով**

Լիցենզավորման և վերահսկողության հանձնաժողովը քննարկում է՝  
ա) բանկերի և օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի ստեղծմանը նախնական հավանություն տալու, բանկերի և օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի գրանցման և լիցենզավորման,

բ) բանկերի մասնաճյուղերի, ներկայացուցչությունների, ինչպես նաև օտարերկրյա բանկերի ներկայացուցչությունների գրանցման,

գ) մասնագիտացված անձանց ինքնակարգավորվող կազմակերպությունների, դրանց կանոնների գրանցման,

դ) այլ անձանց լիցենզավորման,

ե) «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և կենտրոնական բանկի խորհրդի կողմից հաստատված կանոնակարգ 1-ով նախատեսված փոփոխությունների գրանցման,

զ) բանկի ղեկավարների (բացառությամբ կառուցվածքային ստորաբաժնումների ղեկավարների), ինչպես նաև կենտրոնական բանկի կողմից լիցենզիա ստացող այլ անձանց որակավորման և մասնագիտական համապատասխանության,

է) արժեթղթերի շուկայում մասնագիտական գործունեություն իրականացնելու որակավորման,

ը) արժեթղթերի գրանցման հայտարարագրի գրանցման հարցերը,

թ) բանկի կողմից թույլ տրված օրենսդրական խախտումները, առկայության դեպքում՝ բանկի բացատրությունները և առարկությունները,

ժ) խախտում թույլ տված բանկի և (կամ) դեկավարի նկատմամբ պատժամիջոց կիրառելու նպատակահարմարությունը,

ժա) Կենտրոնական բանկի կողմից գրանցված կամ լիցենզիա ստացած, ինչպես նաև Կենտրոնական բանկի կողմից վերահսկվող այլ անձանց կողմից թույլ տրված օրենսդրական խախտումները, առկայության դեպքում՝ նրանց բացատրությունները և առարկությունները, նրանց նկատմամբ պատժամիջոց կիրառելու նպատակահարմարությունը,

ժբ) «ա-ժա» ենթակետերին առնչվող այլ հարցեր,

ժգ) Կենտրոնական բանկի այլ իրավական ակտերով նախատեսված այլ լիազորություններից բխող հարցեր:

Հանձնաժողովի նիստերը գումարվում են ըստ անհրաժեշտության, բայց ոչ պակաս, քան շաբաթը մեկ անգամ:


2007թ. գումարվել է Լիցենզավորման և վերահսկողության հանձնաժողովի 66 նիստ:

### ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Հանձնաժողովի իրավասություններն են՝ ՀՀ Կենտրոնական բանկի ծախսերի նախահաշվի և կապիտալ ներդրումների ծրագրի կազմումը, նախնական հաստատումը, ընթացիկ տարում հաստատված ծրագրի ծախսային հոդվածներում առաջարկվող փոփոխությունների քննարկումը, ծախսերի նախահաշվի և կապիտալ ներդրումների ծրագրի կատարումն ու վերահսկումն ապահովող հաշվետվությունների քննարկումը և դրանց ներկայացումը ՀՀ Կենտրոնական բանկի խորհրդին:

2007թ. գումարվել է Բյուջետային հանձնաժողովի 30 նիստ:

## ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ



## Դրամավարկային քաղաքականության վարչություն

Հիմնական նպատակներն են՝ գնաճի կառավարմանը և ֆինանսական համակարգի կայունության ապահովմանն ուղղված դրամավարկային քաղաքականության մշակումը, մակրոտնտեսական հետազոտությունների և կանխատեսումների իրականացումը տնտեսության բոլոր հատվածների (իրական, պետական, արտաքին և ֆինանսական) համար, ՀՀ Կառավարության հետ մակրոտնտեսական քաղաքականության ծրագրերի համատեղ մշակումը և իրագործման ընթացքում դրամավարկային և հարկաբյուջետային քաղաքականությունների կողրինացումը, արժութային քաղաքականության մշակումը և զարգացումը, համագործակցությունը միջազգային կազմակերպությունների հետ, ՀՀ կենտրոնական բանկի կողմից իրականացվող դրամավարկային քաղաքականության թափանցիկության և հրապարակայնության ապահովումը:

## Ֆինանսական վարչություն

Հիմնական նպատակը դրամավարկային քաղաքականության իրականացումն է, որից ելնելով ներքին ֆինանսական շուկայում կատարվում են գործառնություններ՝ համաձայն վարչության կողմից պատրաստվող իրացվելիության կարծագանկետ (ամսական) ծրագրնամարտ:

Վարչության հիմնական խնդիրներից է նաև միջազգային պահուստների կառավարումը, որի նպատակով արտաքին շուկաներում իրականացնում է գործառնություններ և արտաքին ռիսկերի կառավարում:

## Ֆինանսական վերահսկողության վարչություն

Հիմնական խնդիրներն են՝ ֆինանսական համակարգի կայունության և բնականոն գործունեության ապահովման նպատակով ֆինանսական հաստատություններում առաջացող ռիսկերի վաղ բացահայտումը, գնահատումը և կանխարգելումը, արժեթղթերում ներդրողների շահերի պաշտպանությունը, արժեթղթերի շուկայի թափանցիկության և արժեթղթերի գնագոյացման համակարգի արժանահավատության ապահովումը, արժեթղթերի շուկայում համակարգային ռիսկերի նվազեցումը:

## Ֆինանսական համակարգի քաղաքականության և վերլուծությունների վարչություն

Հիմնական խնդիրը կայուն ֆինանսական համակարգ և ֆինանսական համակարգի կարգավորման ու վերահսկողության միջազգային չափանիշներին համապատասխանող կառուցվածք ձևավորելն է: Այդ նպատակով վարչությունը բացահայտում է Հայաստանի Հանրապետության ֆինանսական համակարգում առկա հիմնախնդիրները, գնահատում է երկրի ֆինանսական կայունությանը սպառնացող հավանական ռիսկերը, ուսումնասիրում է է միջազգային լավագույն փորձը և կատարում հետազոտություններ՝ առկա խնդիրներին համապատասխան լուծումներ տալու համար: Վարչությունը իրականացնում է նաև ՀՀ-ում նոր ֆինանսական ինստիտուտների և ենթակառուցվածքների ներդրման աշխատանքներ:

## Վճարային համակարգերի և դրամաշրջանառության կարգավորման վարչություն

Հիմնական նպատակներն են՝ ՀՀ-ում գործուն վճարահաշվարկային համակարգի ստեղծումն ու զարգացումը, որի համար իրականացնում է՝ ՀՀ վճարահաշվարկային համակարգի զարգացման ռազմավարության մշակում և գործունեության կարգավորում, վճարային ծառայություն մատուցող կազմակերպությունների կողմից ստեղծվող և/կամ օգտագործվող վճարային համակարգերի և

վճարային գործիքների կանոնակարգում, վճարահաշվարկային բնագավառում հնարավոր գեղձարարությունների դեմ ուղղված միջոցառումների մշակում, Հայաստանի Հանրապետության ազգային արժույթի թողարկում, ՀՀ կանխիկ դրամաշրջանառության արդյունավետ կազմակերպում ու կարգավորում, ՀՀ կենտրոնական բանկի հաճախորդների դրամարկղային սպասարկում:

### **Վիճակագրության վարչություն**

Հիմնական նպատակներն են՝ ՀՀ դրամավարկային և ֆինանսական հատվածի, վճարային հաշվեկշռում դրամավարկային կարգավորման մարմինների և ֆինանսական հատվածի՝ արտաքին աշխարհի հետ գործառնությունների, ինչպես նաև արտաքին պահանջների ու պարտավորությունների վերաբերյալ վիճակագրության հավաքագրումը, մշակումը, ամփոփումը և տարածումը, ինչպես նաև համապատասխան մեթոդաբանության զարգացումը և համապատասխանեցումը միջազգային չափանիշներին և լավագույն փորձին:

### **ՀՀ ԿԲ կանխիկ դրամով գործառնությունների վարչություն**

Հիմնական նպատակներն են՝ ՀՀ տարածքում գործող բանկերի և ՀՀ կենտրոնական բանկի այլ հաճախորդների դրամարկղային սպասարկումը, Կենտրոնական բանկ մուտքագրված կանխիկ դրամի վերահաշվումը, հնամաշ, կեղծ և անվճարունակ դրամանիշերի տեսակավորումը, կանխիկ դրամի շրջանառության ընթացքում զանգվածի գտումը հնամաշ, կեղծ և անվճարունակ դրամանիշերից:

### **ՀՀ ԿԲ վերստուգիչ խումբ**

Վերստուգիչ խմբի նպատակը ՀՀ կենտրոնական բանկի գործունեության անկախ և անկողմնակալ գնահատման հիման վրա ստացված տեղեկատվության տրամադրումն է ՀՀ կենտրոնական բանկի ղեկավարությանը և հայտնաբերված թերությունների և սխալների շուկան ու առկա հիմնախնդիրների լուծման վերաբերյալ առաջարկությունների ներկայացումը:

Վերստուգիչ խմբի խնդիրն է կենտրոնական բանկի գործունեության առնչվող ռիսկերի ուսումնասիրումը, դրանց նվազեցման և կանխարգելման ներքին հսկողության մեխանիզմների արդյունավետության գնահատումը:

### **ՀՀ կենտրոնական բանկի աշխատակազմ**

Հիմնական նպատակը Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի նախագահի, տեղակալի, խորհրդի բնական աշխատանքի, ստորաբաժնումների և ղեկավարության միջև փոխհամագործակցության, ինչպես նաև կենտրոնական բանկում փաստաթրաշրջանառության անընդհատության ապահովումն է:

### **ՀՀ ԿԲ մամուլի ծառայություն**

Հիմնական նպատակներն են՝ ՀՀ կենտրոնական բանկի ղեկավարությանը տեղական և ռուսական ՉԼՄ-ներում հրապարակվող տեղեկատվության տրամադրումը, ՀՀ կենտրոնական բանկի և Հայաստանի բանկային համակարգի վերաբերյալ տեղեկատվական հոսքերի ապահովումը, ՉԼՄ-ների միջոցով հասարակությանը ՀՀ կենտրոնական բանկի կողմից իրականացվող քաղաքականության վերաբերյալ պաշտոնական տեղեկատվության հաղորդումը, ՀՀ կենտրոնական բանկի մասին արտասահմանյան տեղեկատվական գործակալություններին, առանձին հրատարակություններին տվյալների տրամադրումը և ՀՀ կենտրոնական բանկի իմիջի ձևավորումը:

## Դաշվապահական հաշվառման վարչություն

Հիմնական նպատակներն են՝ ՀՀ կենտրոնական բանկում հաշվապահական հաշվառման վարումը՝ հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների համաձայն, ՀՀ կենտրոնական բանկի հաշվապահական հաշվառման քաղաքականության մշակումը, եռամսյակային և տարեկան ֆինանսական հաշվետվությունների, ԿԲ ծախսերի նախահաշվի և կապիտալ ներդրումների ծրագրի կազմումը, կատարումը և վերահսկումը:

## Տնտեսական հետազոտությունների վարչություն

Հիմնական նպատակներն են՝ տնտեսագիտական տեսությունների գործնական կիրառումը դրամավարկային քաղաքականության մշակման և իրականացման գործընթացում, երկարաժամկետ հատվածում ՀՀ տնտեսության զարգացման սցենարների մշակումը, մակրո- և միկրոտնտեսական հետազոտությունների իրականացումը տնտեսության առանձին հատվածների (իրական, պետական, արտաքին և ֆինանսական) համար, տնտեսագիտական տեսությունների և դրանց գործնական կիրառման միջազգային փորձի ուսումնասիրությունը:

## Գործառնական վարչություն

Հիմնական նպատակներն են՝ ներքին և արտաքին շուկաներում ՀՀ ԿԲ ֆինանսական գործառնությունների կատարումը, ՀՀ Կառավարության, առևտության բանկերի և ՀՀ կենտրոնական բանկի այլ հաճախորդների բանկային սպասարկումը, ՀՀ կենտրոնական բանկի թղթակցային հաշիվների վարումը, պետական արժեթղթերի հաշվառման Դեպո համակարգով գործառնությունների իրականացումը:

## Իրավաբանական վարչություն

Հիմնական նպատակներն են՝ ՀՀ կենտրոնական բանկի կողմից ընդունվող նորմատիվային և անհատական իրավական ակտերի համապատասխանության ապահովումը ՀՀ օրենսդրության նորմերին, ՀՀ կենտրոնական բանկի կողմից իրականացվող գործառնությունների և Կնքվող գործարքների համապատասխանության ապահովումը ՀՀ օրենսդրության պահանջներին, ՀՀ կենտրոնական բանկի շահերի պաշտպանությունը ՀՀ կամ այլ պետությունների դատարաններում, ՀՀ բանկային, արժութային, ապահովագրական, արժեթղթերի շուկան կարգավորող օրենսդրության, ինչպես նաև ՀՀ կենտրոնական բանկի գործունեությանը առնչվող այլ օրենքների և իրավական ակտերի ստեղծմանն ու կատարելագործմանն օժանդակումը, ՀՀ կենտրոնական բանկի ընդունած նորմատիվային իրավական ակտերի համակարգումը և դրանց կանոնակարգման վերաբերյալ առաջարկությունների մշակումը, դատական փորձի ուսումնասիրումը և ամփոփումը ՀՀ կենտրոնական բանկի կողմից ներկայացված հայցերի մասով, ՀՀ կենտրոնական բանկի միջազգային կապերի իրավական ապահովումը, ՀՀ տարածքում գործող բանկերի, օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի, վարկային կազմակերպությունների, ապահովագրական ընկերությունների, վճարահաշվարկային կազմակերպությունների, գրավատների, արժեթղթերի շուկայի մասնագիտացված մասնակիցների, արտարժույթի դիլերային-բրոքերային առուվաճառք իրականացնող անձանց, փոխանակման կետերի և ԿԲ կողմից լիցենզավորվող այլ անձանց, իսկ օրենքով նախատեսված դեպքերում՝ նաև արժեթղթերի իրապարակային առաջարկություններով հանդես եկող անձանց լիցենզավորումը և վարույթների իրականացումը:

## ***Տեղեկատվության և տեխնիկական միջոցների պաշտպանության վարչություն***

Հիմնական նպատակը ՀՀ կենտրոնական բանկի կայուն ու հուսալի գործունեության ապահովումն է:

### ***Գործերի կառավարչություն***

Հիմնական նպատակն է ՀՀ կենտրոնական բանկի նախագահի, նախագահի տեղակալի, խորհրդի անդամների և աշխատակիցների աշխատանքային պատշաճ պայմանների և բանկի նորմալ գործունեության ապահովումը, այդ թվում՝ շենքերի և շինությունների շահագործումը և սպասարկումը, տեխնիկայի, գույքի և տնտեսական ապրանքների մատակարարումը և սպասարկումը, ավտոտնտեսության սպասարկումը:

## ***Տեղեկատվական և հեռահաղորդակցման տեխնոլոգիաների վարչություն***

Հիմնական նպատակներն են՝ մշակել և իրականացնել ՀՀ կենտրոնական բանկի ավտոնատացման ռազմավարությունը, ստեղծել, ներդնել և զարգացնել ՀՀ կենտրոնական բանկի ներքանկային ու միջբանկային տեղեկատվական և ցանցային համակարգեր բանկային և տեղեկատվական ժամանակակից տեխնոլոգիաների կիրառմամբ, ապահովել ՀՀ կենտրոնական բանկի ներքանկային և միջբանկային ավտոնատացված համակարգերի, միջազգային վճարային և այլ տեղեկատվական համակարգերի անխափան և արդյունավետ աշխատանքը, մշակել և ներդնել տեղեկատվական անվտանգության քաղաքականությունը ու ստանդարտները, վերահսկել դրանց պահպանումը, կատարել տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման հետ կապված ռիսկերի վերլուծություն և կառավարում, գնահատել վտանգները և սպառնալիքները, մշակել և իրականացնել վտանգների նվազեցմանն ուղղված միջոցառումներ, արտակարգ իրավիճակներում իրականացնել տեղեկատվական համակարգերի աշխատունակության ապահովման հատուկ միջոցառումներ:

### ***Ֆինանսական դիտարկումների կենտրոն***

Հիմնական նպատակը հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացման և ահարեկզության ֆինանսավորման դեմ պայքարի արդյունավետ մեխանիզմների ստեղծումն է:

## ***ՀՀ ԿԲ կենսաթոշակային բարեփոխումների նախապատրաստման խումբ***

Հիմնական նպատակը կենսաթոշակային բարեփոխումների ծրագրի մշակումն է և դրա իրագործման համար անհրաժեշտ միջոցառումների իրականացումը:

### ***Անձնակազմի կառավարման վարչություն***

Հիմնական նպատակը ՀՀ կենտրոնական բանկում անձնակազմի կառավարման համակարգի անբողջականության ապահովումն է հիմնված աշխատատեղերի և աշխատանքի կատարողականի, ՀՀ կենտրոնական բանկի աշխատակիցների ներուժի, կարիքների գնահատման և դրանց համապատասխան վերապատրաստման ծրագրերի մշակման համակարգերի վրա:

## Հասարակայնության հետ կապեր

2007 թ. հասարակայնության հետ կապերի ոլորտում իրականացվել են ԿԲ գործունեության լուսաբանման, մեկնաբանման և կրթական ծրագրերի կազմակերպման աշխատանքներ:

Հետևելով հասարակայնության տեղեկացմանն ու իրազեկմանն ուղղված ավանդական քաղաքականությանը՝ ՀՀ Կենտրոնական բանկը շարունակել է հաճագործակցել մի շարք հասարակական կազմակերպությունների, այդ թվում՝ Հայաստանի բանկերի միության, Հայաստանի հիփոթեքային շուկայի մասնակիցների միության և Ապահովագրողների ասոցիացիայի հետ: ՀՀ ֆինանսական օրենսդրությանը վերաբերող բոլոր օրենքների, ենթաօրենսդրական ակտերի և կարևոր որոշումների նախագծերը քննարկվել են հիշյալ միությունների ներկայացուցիչների հետ:

Կենտրոնական բանկը պարբերաբար հանդիպումներ է կազմակերպել ՀՀ ֆինանսական դաշտում գործող կազմակերպությունների դեկավարների հետ, ներկայացնել դրամավարկային քաղաքականության և ֆինանսական վերահսկողության ոլորտում իր գործողությունները, նախատեսվող ծրագրերը, օրենսդրական նախաձեռնությունները: Բանկերի դեկավարներին եռամսյակային պարբերականությամբ ներկայացվել է հաջորդ եռամսյակի դրամավարկային քաղաքականության ծրագիրը և այդ ուղղությամբ ԿԲ նախատեսված քայլերը, պարբերական քննարկումներ են կազմակերպվել այլ հարցերի շուրջ:

Ելմելով գնաճի նպատակադրման քաղաքականության սկզբունքներից՝ Կենտրոնական բանկը ամսական պարբերականությամբ հրապարակել է ռեպո (վերաֆինանսավորման) գործառնությունների տոկոսադրույթների մասին ԿԲ խորհրդի որոշումները, որոնք ուղենչային են դարձել ՀՀ ձեռնարկությունների և ընկերությունների համար: Որոշման մասին համառոտ հաղորդագրությունը հրապարակվում է ԿԲ խորհրդում որոշման կայացումից անմիջապես հետո, իսկ 10 օրվա ընթացքում հրապարակվում է ԿԲ խորհրդի արձանագրությունն ամբողջությամբ:

Հասարակայնությանը իրազեկման և տեղեկատվության տարածման արդյունավետ միջոցներից է Կենտրոնական բանկի ինտերնետային էջը ([www.cba.am](http://www.cba.am)), որում ամբողջական տեղեկատվություն է տեղակայված ԿԲ կառուցվածքի, գործունեության, հաճապատասխան օրենսդրության, վերահսկվող կառույցների, վիճակագրական տվյալների, հրապարակումների և հաղորդագրությունների մասին: Առանձին ներկայացված են այն օրենսդրական նախաձեռնություններն ու նախագծերը, որոնց լրամշակման և բարելավման նպատակով Կենտրոնական բանկն ակնկալում է հասարակության արձագանքը: Էջից օգտվողները հնարավորություն ունեն ծանոթանալու ԿԲ մասնագետների կատարած հետազոտություններին և առաջարիած թեգերին:

Կենտրոնական բանկի մասուլի ծառայությունը 2007 թ. կազմակերպել է 18 մամլո ասուլիսներ, 14 հանդիպումներ և հարցագրույցներ: Լրագրողների գրավոր և բանավոր 34 հաղումների տրվել են սպառչչ պատասխաններ: ԿԲ գործունեության լուսաբանման նպատակով թողարկվել են 88 մամլո հաղորդագրություններ, խորհրդի նիստերի մասին՝ 40 և ռեպո գործառնությունների տոկոսադրույթի մասին՝ 23 հաղորդագրություններ:

Տնտեսական թեմաներ լուսաբանող լրագրողների համար Ծաղկաձորում կազմակերպվել է 2 սեմինար՝ հոկտեմբերի 6-7-ը և նոյեմբերի 24-25-ը, որոնց ժամանակ ներկայացվել են նոր օրենսդրական բարեփոխումներին և հայեցակարգերին առնչվող հարցեր: Կենտրոնական բանկի դեկավարության և ստորաբաժանումների դեկավարների համար կազմակերպվել է սեմինար՝ ԶԼՄ-ների հետ աշխատանքի հիմունքների վերաբերյալ:

2006 - 2007 ուսումնական տարում Երևանի և մարզերի բարձր դասարանցիների համար կազմակերպվել են այցելություններ՝ Կենտրոնական բանկ: Նրանց ներկայացվել են ԿԲ գործունեությունը, հիմնական խնդիրները, փողի և դրամի համառոտ պատմությունը, ցուցադրվել են տեսանյութեր: Վերջում աշակերտները լրացրել են հարցաթերթիկներ: Նշված ժամանակահատվածում էրսկուրսիաներին մասնակցել է 4712 մարդ, որից՝ 4312 աշակերտներ ու ուսանողներ և 400 ուղեկցող ուսուցիչներ:

Համբակերպական դպրոցներում «Տնտեսագիտություն» դասավանդող ուսուցիչների համար Ֆինանսարբանկային քոլեջում կազմակերպվել են 3 կրթական սեմինարներ՝ «Տնտեսագիտություն. տեսություն և կիրառություն» թեմայով, որոնց ընդհանուր առնամբ, մասնակցել են 44 ուսուցիչներ՝ 38 դպրոցներից: Նոյեմբերի 19-ին կազմակերպվել է սեմինարներին մասնակցած ուսուցիչների և ԿԲ այցելած լավագույն աշակերտների համբիկումը Կենտրոնական բանկի նախագահի հետ, տեղի է ունեցել վկայականների հանձնում:

Դրամի շրջանառության 14-ամյակի կապակցությամբ և փոխանակման կետերի կողմից անդորրագրերի տրամադրման կարևորության մասին նկարահանվել են համապատասխանաբար 5 և 2 տեսահոլովակներ, որոնք հեռարձակվել են 4 հեռուստաալիքներով: «Գնաճի հրեշը» կրթական մուլտֆիլմը հեռարձակվել է 2 հեռուստաալիքներով: Դրամի վերաբերյալ ռադիոգովազներ են պատվիրվել և հեռարձակվել ռադիոկայաններով:

Կենտրոնական բանկը շարունակել է ուսանողների խրախուսմանն ուղղված ծրագիրը: Տնտեսագիտական քուերի ուսանողները տարեկան երկու անգամ ԿԲ խորհրդին են ներկայացնում իրենց ուսումնասիրությունները, որոնցից լավագույնների հեղինակներն արժանանում են հսահակ հսահակյանի անվան կրթարոշակին: 2007 թվականին կրթարոշակ են ստացել 12 ուսանողներ:

Հոկտեմբերին հաստատվել է «Կենտրոնական բանկի այցելուների կենտրոնի հայեցակարգը», որը հնարավորություն է տալիս համբակերպական դպրոցների աշակերտների համար իրականացնելու լայնածավալ կրթական ծրագիր:

Դրամի ներդրման 14-ամյակի կապակցությամբ տնտեսագիտական քուերի ուսանողների համար կազմակերպվել են Կենտրոնական բանկի նախագահի 2 ելույթներ՝ նվիրված ՀՀ տնտեսական զարգացմանը և ֆինանսական կենտրոն դաշնային հայեցակարգին: Կազմակերպվել են նաև 3 երաժշտական փառատոններ, որոնց մասնակցել են 15 խմբեր և մոտ 1500 ունկնդիրներ:

## ԱԱՃԱԿԱՋՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

2007 թվականին ԱԱՃԱԿԱՋՄԻ կառավարման վարչությունը կազմավորվել է որպես ինքնուրույն ստորաբաժանում Կենտրոնական բանկի կառուցվածքում:

Համաձայն որդեգրած սկզբունքների՝ ՀՀ կենտրոնական բանկի կադրային քաղաքականությունը նպատակառուղղվել է կազմակերպության հիմնական գործունեության խթանմանը, աշխատանքի արդյունավետության և աշխատակցների սոցիալական և մասնագիտական զարգացման պահանջների բավարարմանը:

Անցկացվել են մի շարք հետազոտություններ՝ ՀՀ կենտրոնական բանկի աշխատակիցներին մոտիվացնող և ապանուտիվացնող, սրբես առաջացնող գործուները բացահայտելու, Կենտրոնական բանկում կադրերի հոսունության պատճառները պարզելու նպատակով:

Մշակվել են Կենտրոնական բանկի աշխատակիցներին սոցիալական նպաստների հատկացման սկզբունքները:

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԸ շանկը շարունակել է ԵՐԻՍԱՍԱՐԴ մասնագետներ ներգրավելու, նրանց որակավորումը բարձրացնելու և ներուժը օգտագործելու քաղաքականությունը: Ինչպես նախորդ տարիներին, ԵՐԻՍԱՍԱՐԴ մասնագետների ընտրությունը կատարվել է առավելապես Ֆինանսարաններին քոլեջ հիմնադրամի կողմից կազմակերպվող «ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ» ներածական դասընթաց» ուսումնական ծրագրի մասնակիցներից: 2007 թվականին ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ գործառության ստորաբաժանումներում ժամկետային պայմանագրով աշխատել են 28 ԵՐԻՍԱՍԱՐԴ մասնագետներ, որոնցից 16-ը համալրել են ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ անձնակազմը:

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿՈՒՄ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ և ՆԱԽԱԴԻՎՈՐԾՄԱՅԻՆ ԱՐԱԿՄԻԿԱ ԵՆ ԱՆԳԵԼ ԴԱՅԱՍՏԱՆԻ ԴԱՆՐԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԲՈՒԻԵՐԻ 56 ՈՒՍԱՆՈՂՆԵՐ:

2007 թվականին ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ աշխատակիցների միջին թվաքանակը կազմել է 604՝ 345 կին և 259 տղամարդ, միջին տարիքը՝ 35.9:

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԸ, ԵԼԵԿԵԼՈՎ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ զարգացման իր որդեգրած քաղաքականության սկզբունքներից, նշանակել ու ՀՀ տարածքում և արտերկրության հրագործել է վերապատրաստման նոր ծրագրեր:

Շարունակելով ակտիվ համագործակցությունը Անգլիայի Բանկի՝ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԵՐԻ ՈՒՍՈՒցՈՂԱԿԱՆ ԼԵՆՏՐՈՆԻ, ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԲՈՒՆԴԵՍԲՐԱՆԿԻ, Ֆրանսիայի ազգային բանկի, Նիդեռլանդների, Ռուսաստանի Դաշնության կենտրոնական բանկերի, Շվեյցարիայի, Լեհաստանի և Չեխիայի ազգային բանկերի հետ՝ ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԸ 2007 թ., տեխնիկական աջակցության շրջանակներում, նոր կապեր է ստեղծել Լատվիայի և Էստոնիայի, Ուկրաինայի կենտրոնական բանկերի, Իսպանիայի, Իտալիայի, ճապոնիայի, Շվեդիայի ազգային բանկերի և մի շարք միջազգային կազմակերպությունների հետ:

Ընդհանուր առնամբ, օտարերկրյա բանկերի, հարակից ուսումնական հաստատությունների առաջարկած 161 վերապատրաստման ծրագրերին մասնակցել են ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ 238 աշխատակիցներ: Նշված ծրագրերից 28-ը նախաձեռնել են ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ստորաբաժանումները՝ որպես անձնակազմի կողմից առաջարկված խնդիրների մանրամասն ուսումնասիրության դասընթացներ: Նիդեռլանդների բանկի աջակցությամբ ՀՀ ԿԲ-ում սկսվել է ԿԲ գործունեության անընդհատության ապահովման կարևորագույն ծրագրի իրականացումը:

Ֆինանսական կայունության ինստիտուտի աջակցությամբ 2007 թ. ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿՈՒՄ սկսվել են բանկային վերահսկողության ուսուցողական (հրական ժամանակի ռեժինով) դասընթացները, որոնց մասնակցել են ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ 6 աշխատակիցներ:

2007 թվականին դասընթացներ և համդիպումներ են կազմակերպվել նաև ՀՀ տարածքում:

Դաշվի առնելով այն փաստը, որ ՀԱՅԱՍՏԱՆԸ Ֆինանսական հաշտարարի ինստիտուտի ստեղծման նախաշեմին է, հատկապես կարևոր էր ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ նախաձեռնած Մեծ Բրիտանիայի ֆինանսական օմբուդսմենի այցը Հայաստանի Հանրապետություն: Դասընթացի 22 մասնակիցները ներկայացնում են ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԸ, տարբեր գերատեսչություններ ու հասարակական կազմակերպություններ:

Մեծ Բրիտանիայից հրավիրված մասնագետների՝ «Պայքար փողերի «լվացման» դեմ» թեմայով դասընթացը դրական արձագանք է ստացել ՀՀ հասարակայնության կողմից: Դասընթացին մասնակցել են ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԸ և առևտրային բանկերից հրավիրված շուրջ 35 ներկայացուցիչներ:

Բանկային համակարգի վերահսկողության ոլորտում կարևոր դեր է ունեցել ԱՄ Դաշնային պահուստային համակարգի նախաձեռնությամբ Երևանում կազմակերպված հերթական միջազգային տարածաշրջանային սեմինարը, որին մասնակցել են ՀՀ ԿԲ և օտարերկրյա բանկերից հրավիրված բազմաթիվ մասնագետներ:

ԿԲ անճնակազմն ակտիվ մասնակցություն է ունեցել նաև վերապատրաստման ներքին ծրագրերի դասընթացներին: Ֆինանսարանների քույզի դասընթացներին մասնակցել են մոտ 50 աշխատակիցներ: Կառավարչական հմտությունների զարգացման դասընթացներին մասնակցել են 20, իսկ անգլերեն լեզվի դասընթացներին՝ շուրջ 40 աշխատակիցներ:

2007 թ. վերապատրաստման արտաքին և ներքին ծրագրերի մասնակցության ցուցանիշի աճը կազմել է 10-15 տոկոս:

Ընդլայնվել է միջազգային կազմակերպությունների և կենտրոնական բանկերի հետ համագործակցության շրջանակը:

## Միջազգային համագործակցություն

2007 թվականին Կենտրոնական բանկը շարունակել է երկկողմ և բազմակողմ համագործակցությունը միջազգային կազմակերպությունների և օտարերկրյա մարմինների հետ: Սասնավորապես՝ ԱՄՀ/ՀԲ-ի տեխնիկական օժանդակության շրջանակներում ՀՀ կենտրոնական բանկն ընդունել է ԱՄՀ դրամավարկային քաղաքականության, բանկային վերահսկողության և ֆինանսական գործառնությունների բնագավառների խորհրդականների և առաքելությունների:

ՀՀ կենտրոնական բանկի աշխատակիցները մասնակցել են բանկային և ֆինանսական միջազգային համաժողովների, ֆորումների, կլոր սեղանի նիստերի, խորհրդակցությունների, ցուցահանդեսների, աշխատանքային սեմինարների, հանդիպումների, որտեղ հանդես են եկել գեկուցումներով և ելույթներով: Հիշատակնան են արժանի՝ HSBC խմբի վերահսկողների տարեկան հանդիպումը (Լոնդոն, ՄԲ), ԱՊՀ անդամ երկրների արժեթղթերի շուկաների կարգավորման պետական մարմինների ղեկավարների նիստը (Մոսկվա, ՌԴ), Եվրոխորհրդի փողերի «լվացման» և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի համակարգերի գնահատման փորձագետների հանձնաժողովի (ՄԱՆԻՎԱԼ) 4 նիստերը (Ստրասբուրգ, Ֆրանսիա), ԵՎՐԱԶԵՍ անդամ երկրների կենտրոնական բանկերի Համակարգող խորհրդի նիստը (Տուլա, ՌԴ), «ՀՀ կենտրոնական բանկում պահուստների կառավարում» թեմայով գործադիր ֆորումը (Վաշինգտոն, ԱՄՆ), «Արտադիւրի մեծածավալ ներհոսքի ազդեցությունը Հարավային Կովկասի և Կենտրոնական Ասիայի երկրներում» թեմայով համաժողովը (Ալմարի, Ղազախստան), Աևճովյան Արևտրի և զարգացման բանկի տնօրենների խորհրդի հանդիպումները (Սալոնիկ, Հունաստան), Հաշվապահների և առողջապահների եվրոպական ֆորումը (Ռիգա, Լատվիա), ԵԳՍՈՆ խմբի անդամ երկրների լիազումար նիստը (Համբլտոն, Բերմուդյան կղզիներ), Գերմանական KfW բանկի վերահսկող խորհրդի հանդիպումը (Ֆրանկֆուրտ, Գերմանիա), ԱՊՀ անդամ երկրների ԿԲ իրավաբանական վարչության պետերի հանդիպումը (Թբիլիսի, Վրաստան), Փողերի «լվացման» և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի Եվրասիական խմբի նիստերը (Սոչի, ՌԴ և Սանյա, Չինաստան), ԵԳՍՈՆ խմբի անդամ երկրների լիազումար նիստը (Կիև, Ուկրաինա), «Կուտակային համակարգերի դերը կենսաթոշակային հիմնախնդիրների լուծման գործում» թեմայով համաժողովը (Վարնա, Բուլղարիա), Արժուվիր միջազգային հիմնադրամի և Համաշխարհային բանկի Նիդեռլանդների ենթամիջնարդի կառավարիչների տարեկան հանդիպումը (Բիշեն, Մոլդովա), «Ավանդների ապահովագրության համակարգերի դերը ֆինանսական կայունության անրապնդման խնդրում» թեմայով համաժողովը (Ստամբուլ, Թուրքիա), Միջ-

պետական բանկի աշխատանքային խմբի նիստը (Մոսկվա, ՌԴ), ԱՊՀ երկրների միջազգային արժութային կոմիտեի նիստը (Մոսկվա, ՌԴ), Միջին Ասիայի, Սևոլյան տարածաշրջանի և Բալկանյան երկրների կենտրոնական բանկերի կառավարիչների ակունքի նիստը (Պոդգորիցե, Չեռնոգորիա), SWIFT օգտագործողների և անդամների ազգային ասոցիացիաների նախագահների տարեկան համաժողովը (Բուստոն, ԱՄՆ), Արժույթի միջազգային հիմնադրամի և Համաշխարհային բանկի կառավարիչների խորհուրդների տարեկան հանդիպումը (Վաշինգտոն, ԱՄՆ), Եվրասիական Զարգացման բանկի համատեղ աշխատանքային խմբի նիստը (Մոսկվա, ՌԴ), Միջազգային պահուստների կառավարման միտումների վերաբերյալ տարեկան ֆորումը (Դուբայ, ԱՄՍ):

ՀՀ կենտրոնական բանկի մասնագետները մասնակցել են նաև օտարերկրյա առևտության բանկերի կողմից կազմակերպված սեմինար-խորհրդակցություններին և համաժողովներին:

Գործնական կապերը ընդլայնելու և բանակցություններ վարելու նպատակով հաշվետու ժամանակաշրջանում ՀՀ կենտրոնական բանկ են այցելել UBS Global Asset Management, "FITCH RATINGS" վարկանշային գործակալությունների, CitiBank, De La Rue Cash Systems ընկերության, ԱՄՆ-ի գանձապետական դեպարտամենտի, OMX GROUP ընկերության, ՄԱԿ-ի Թմրանիջոցների ու հանցավորության դեմ պայքարի գրասենյակի (UNODC), USAID կազմակերպության, Վճարային նախաձեռնություն ԱՊՀ երկրների համար (CISPI) ծրագրի, Ազգային պահուվագրական ոլորտում խորհրդատվություններ տրամադրելու նպատակով՝ Գերմանիայի, Արտաքին գնահատում անցկացնելու նպատակով՝ Նիդեռլանդների բանկի փորձագետները:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահի հրավերով հոկտեմբերի 5-9-ը կենտրոնական բանկ են այցելել ՌԴ կենտրոնական բանկի առաջին տեղակալ Ալեքսեյ Ուչյուկանը, նոյեմբերի 11-14-ը՝ Նիդեռլանդների բանկի կառավարիչ Նուտ Վելինկը և դեկտեմբերի 13-14-ը՝ Համաշխարհային բանկի Եվրոպայի և կենտրոնական Ասիայի տարածաշրջանի փոխնախագահ Շիգեու Կացսուն:

ՀՀ կենտրոնական բանկի նախաձեռնությամբ 2007 թ. մայիսի 14-16-ը Երևանում տեղի է ունեցել Մեծ տասնյակի (G-10), Արևելյան Եվրոպայի և ԱՊՀ երկրների կենտրոնական բանկերի տեխնիկական համագործակցության կոորդինատորների տարեկան հանդիպումը, որին մասնակցել են 47 պատվիրակներ 34 պետություններից և միջազգային ֆինանսական կազմակերպություններից:

2007 թ. հունիսի 4-6-ը Ծաղկաձորում ՀՀ կենտրոնական բանկը, Անգլիայի բանկի ուսումնական կենտրոնը և Նիդեռլանդների բանկը համատեղ կազմակերպել են աշխատանքային սեմինար - խորհրդակցություն «ՀՀ կենտրոնական բանկի կառավարում» թեմայով, որին մասնակցել են 13 պատվիրակներ 10 երկրներից:

2007 թ. միջկառավարական հանձնաժողովների շրջանակներում շարունակվել են կենտրոնական բանկերի միջև համապատասխան համաձայնագրերի և փոխընթացական հուշագրերի ստորագրման աշխատանքները:

2007 թ. հոկտեմբերի 22-ին Երևանում ստորագրվել է «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի և Իրանի Իսլամական Հանրապետության կենտրոնական բանկի միջև բանկային վերահսկողության վերաբերյալ» փոխընթացական հուշագրի:

## Ներքին առևտիտ

2002 - 2007 թթ. համեմատական վերլուծությունը և վերստուգիչ խմբի կողմից իրականացված ստուգումների անփոփ ցուցանիշները թույլ են տալիս եզրակացնել, որ բանկում հսկողական միջավայրը ընդհանուր առմանք բարելավնան

շարժ ունի: Այդ մասին են վկայում ինչպես սխալների/խախտումների բացահայտման տեսակարար կշռի նվազումը առևիտորական բացահայտումների ընդհանուր ծավալում, այնպես էլ սահմանված ժամկետներում չկատարված հանձնարարականների անշան ծավալները: Մասնավորապես.

- 2007 թ. արված առաջարկությունների քանակը նախորդ տարվա համեմատությամբ 40-ով ավելացել է (2007 թ.՝ 298 առաջարկ, 2006 թ.՝ 258 առաջարկ),
- 1.5%-ով նվազել են սխալների շտկման և 4.6%-ով՝ կբ կանոնակարգերին համապատասխանության կապակցությամբ արված առաջարկություններ՝ կազմելով առևիտորական բացահայտումների ընդհանուր ծավալի համապատասխանաբար 4.7%-ը և 12.8%-ը (2006 թ. այս ցուցանիշները համապատասխանաբար կազմել են 6.2% և 17.4%),
- առաջարկություններից ժամանակին չի իրականացվել 3-ը, ինչը կազմում է տարվա ընթացքում արված առաջարկությունների 1%-ը:

Հաշվետու տարում կբ վերստուգիչ խումբը, առաջնորդվելով Ներքին առևիտի ինստիտուտի (ՍԱԻ) «Ներքին առևիտի մասնագիտական գործունեության միջազգային ստանդարտների» պահանջով, ըստ 2006 թ. Նիդեղանդների ազգային բանկի հետ ծեռք բերված համաձայնության, անցավ գործունեության որակի գնահատման ընթացակարգի: Գնահատումն անցկացրեցին Նիդեղանդների բանկի որակավորված մասնագետները՝ ՆԱԻ կողմից հաստատված մեթոդակարգով: Գնահատման արդյունքում կբ վերստուգիչ խումբի գործունեությունը ստացավ բավարար գնահատական, որը համապատասխանում է գնահատման մեթոդաբանության չափորոշիչների «Մասնակի համապատասխանող» գնահատականին:

Հաշվետու տարում շարունակվել են Կենտրոնական բանկում ռիսկերի կառավարման միասնական համակարգի ձևավորման աշխատանքները:

Վերստուգիչ խումբը վերը նշված աշխատանքների ընթացքում շարունակական մեթոդական աջակցություն է ցուցաբերել Կենտրոնական բանկի ստորաբաժանումներին, ինչպես նաև իրականացրել է ընթացիկ հսկողություն՝ կատարված աշխատանքների ամբողջականության, գործընթացների՝ սահմանված եղանակով նկարագրման և ներկայացման նկատմամբ:

Միջազգային համագործակցության ընդլայնման շրջանակներում Կենտրոնական բանկի վերստուգիչ խումբն անցկացրել է «Տեղեկատվական տեխնոլոգիաների առևիտ» թեմայով միջազգային սեմինար: Սեմինարի հիմնական գեկուցողները վերստուգիչ խումբի աշխատակիցներն էին: Սեմինարին նաև ցում էին պատվիրակներ ԱՊՀ, Մերձբալթյան և Արևելյան Եվրոպայի երկրներից:

## ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ<sup>4</sup>

Համաձայն «ՀՀ կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի՝ ՀՀ կենտրոնական բանկի հիմնական խնդիրը գների կայունության ապահովումն է, որով ԿԲ-ն իր մասնակցությունն է ունենում երկարատև ժամանակահատվածում կայուն և բարձր տնտեսական աճի ձեռքբերմանն ուղղված տնտեսական քաղաքանության իրականացմանը։ Գների կայունությունը ենթադրում է զնաճի որոշակի մակարդակ, որը ԿԲ կողմից ընդունվում է որպես զնաճի նպատակային մակարդակ կամ զնաճի թիրախ։

ՀՀ-ում զնաճի թիրախը ամրագրվում է ինչպես ՀՀ Կառավարության պետական միջնաժամկետ ծախսերի և ՀՀ դրամավարկային քաղաքականության, այնպես էլ աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրերում և պետական բյուջեի մասին օրենքում։

ՀՀ ԿԲ-ն ինքնուրույն է ընտրում իր կողմից իրականացվող դրամավարկային քաղաքականության ռազմավարությունը, միջանկյալ և գործառնական նպատակները և դրամավարկային գործիքները։

2006 թվականի հունվարի 1-ից ՀՀ ԿԲ-ն անցում է կատարել զնաճի նպատակադրուման ռազմավարությանը, ըստ որի, որպես միջանկյալ նպատակ է ընդունվել զնաճի կանխատեսված մակարդակը, իսկ որպես գործառնական նպատակ՝ կարճաժամկետ տոկոսադրույթը։

Դրամավարկային քաղաքականության հիմնական գործիքը ՀՀ-ում ռեալո գործառնությունների տոկոսադրույթն է (Վերաֆինանսավորման տոկոսադրույթ), որը սահմանվում է ԿԲ խորհրդի կողմից՝ յուրաքանչյուր ամսվա սկզբին։ Վերաֆինանսավորման տոկոսադրույթի վերաբերյալ ՀՀ ԿԲ խորհրդի որոշումը հրապարակվում է որոշման կայացման օրը՝ ԿԲ մանուլի ծառայության հաղորդագրության միջոցով, որը ներառում է ինչպես առաջիկա ամսվա վերաֆինանսավորման տոկոսադրույթի մակարդակի վերաբերյալ տեղեկատվությունը, այնպես էլ տեղի ունեցած քննարկումների հակիրծ անփոփումը։

2007թ. համար սահմանված զնաճի նպատակային թիրախի ապահովմանն ուղղված միջոցառումները նախանշվել են դրամավարկային քաղաքականության ծրագրերում, իսկ դրանց իրականացման փաստացի ընթացքը՝ զնաճի եռամսյակային հաշվետվություններում։

<sup>4</sup> Դրամավարկային քաղաքականության վերաբերյալ մանրամասն հաշվետվությունը ներկայացվում է եռամսյակը մեկ ՀՀ կենտրոնական բանկի կողմից թողարկվող «ՀՀ դրամավարկային քաղաքականության ծրագիր» և «Գնաճի հաշվետվություն» պարբերականում։

## ՀՀ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ<sup>5</sup>

2007 թվականին ՀՀ կենտրոնական բանկը մշակել և ՀՀ Կառավարություն է ներկայացրել ««Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հասուցումը երաշխավորելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» և ««Բանկերի, վարկային կազմակերպությունների և ապահովագրական ընկերությունների սնամկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերը, ֆինանսական համակարգում սպառողների շահերի պաշտպանության ուղղված, ինչպես նաև հիփոթեքային արժեթղթերի թողարկման և ակտիվների արժեթղթավորման գործընթացները կարգավորող օրենքների նախագծերի փաթեթ, որում ներառվել են «Բանկային ավանդների ներգրավման մասին», «Սպառողական կրեդիտավորման մասին», «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին», «Ապահովված հիփոթեքային պարտատոմսերի մասին» և «Ակտիվների արժեթղթավորման և ակտիվներով ապահովված արժեթղթերի մասին» ՀՀ օրենքների նախագծերը, «Վարկային տեղեկատվության շրջանառության և վարկային բյուրոների գործունեության մասին» ՀՀ օրենքի նախագիծը և դրա ընդունմամբ պայմանավորված՝ այլ օրենքներում փոփոխություններ կատարելու մասին օրենքների նախագծեր:

2007 թ. ընդունվել են «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» և «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքները, որոնք համապատասխանեցվել են Եվրոմիության օրենսդրության դրույթներին:

Լայնածավալ փոփոխություններ են իրականացվել նաև ֆինանսական ոլորտը կարգավորող ենթաօրենսդրական ակտերում:

ՀՀ կենտրոնական բանկի կառուցվածքում ստեղծվել է ստորաբաժանում, որի գործառույթը ֆինանսական ոլորտում սպառողների շահերի պաշտպանությունն է:

ԿԲ ակտիվ մասնակցությամբ 2007 թվականին նախագծվել է ՀՀ կենսարոշակային համակարգի բարեփոխումների իրականացման ծրագիրը, որը ներառում է նախատեսվող բազմաստիճան համակարգի պարտադիր և կամավոր կուտակային բաղադրիչների նկարագրությունը, դրանց գործունեության սկզբունքները, կարգավորումը, կառավարումը:

2007 թվականին տեղերում իրականացվել են 511 ստուգումներ, որից՝ 5-ը՝ բոլոր ուղղություններով և 40-ը՝ նպատակային ստուգում բանկերում, 5-ը՝ վարկային կազմակերպություններում, 8-ը՝ ապահովագրական և բրոֆերային ընկերություններում, 30-ը՝ գրավատներում, 18-ը՝ արժեթղթերի շուկայում մասնագիտացված և 403-ը՝ արտարժույթի առուվաճառք իրականացնող ընկերություններում:

Փաստաթղթային և տեղերում իրականացված ստուգումների արդյունքում բացահայտվել են իիմանականում օրենսդրական խախտումներ, տրամադրված տվյալների թերացումներ, հաշվապահական հաշվառման կանոնների, ինչպես նաև սահմանված նորմատիվների խախտումներ և հաշվետվությունների ուշացումներ:

2007 թվականին ՀՀ կենտրոնական բանկի վերահսկողական գործընթացներում առանձնահատուկ ուշադրություն է դարձվել հետևյալ ուղղություններին.

<sup>5</sup> Ֆինանսական համակարգի վերաբերյալ մանրամասն հաշվետվությունը ներկայացվում է «ՀՀ կենտրոնական բանկի բանբեր» եռանյակային պարբերականում, «Հայաստանի ֆինանսական համակարգը զարգացումը, կարգավորումը, վերահսկողությունը» տարեկան հաշվետվությունում և «Ֆինանսական կայունության հաշվետվությունում»:

1. Բանկերում կորպորատիվ կառավարման սկզբունքների արդյունավետ ներդրման գործընթացին՝ առավելապես կարևորելով ներքին հսկողության և ռիսկերի կառավարման համակարգերը, տեղեկատվական տեխնոլոգիաների (SS) ոլորտը, մարդկային ռեսուրսների կառավարումը, թափանցիկության ապահովումը:

2. Վարկային կազմակերպություններում և գրավատներում ակտիվային գործաշնություններին, հաշվապահական ծևակերպումներին, կապիտալի տարրերին, եկամտաբերությանը, SS ոլորտին, վարկային պայուսակի որակին, ներքին հսկողության համակարգին:

3. Ապահովագրական ընկերությունների իրական կապիտալացման մակարդակին, կառավարմանը (ներքին հսկողություն և այլն), հավաքագրված ապահովագրավճարների համեմատ ընկերությունների կողմից տրված հատուցումների մակարդակին:

4. Կորպորատիվ ֆինանսներին առնչվող ազդագրերի գրանցման գործընթացների կազմակերպմանը, իրապարակային առաջարկով հանդես եկող անձանց աջակցությանը:

5. Արժեքթերի շուկայի մասնագիտացված անձանց կողմից արժեքթերի շուկայում մասնագիտացված ծառայությունների մատուցման վարվելակերպի կանոնների պահպաննան, կանխարգելիչ վերահսկողության մասնակի ներդրման, մասնավորապես՝ սեփական կապիտալի տնտեսական նորմատիվի կիրառման, ինչպես նաև չլիցենզավորված անձանց գործունեության կանխարգելման (մուտքի պահանջի պահպանման) հարցերին:

6. Փոխանակման կետերում ծառայությունների մատուցման որակի գնահատմանը, վերջիններիս գործունեության համապատասխանությանը ՀՅ օրենսդրությանը:

## ՀՀ ՎՃԱՐԱՀՎԱԾՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ<sup>6</sup>

2007 թ. ՀՀ կենտրոնական բանկի կողմից ՀՀ վճարահաշվարկային համակարգի զարգացումն իրականացվել է 3 հիմնական ուղղություններով.

- անկանխիկ վճարումների զարգացում,
- վճարային համակարգի հսկողության աշխատանքների ապահովում,
- վճարահաշվարկային կազմակերպությունների գործունեության իրավական դաշտի կատարելագործում:

Հաշվետու տարում մշակվել է «Կանխիկով գործառնությունների սահմանափակման մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որի նպատակն է բարձրացնել անկանխիկ վճարումների մակարդակը՝ կրծատելով կանխիկ դրամաշրջանառությունը և ապահովել ստվերային տնտեսության դեմ պայքարի արդյունավետ մեխանիզմներ: Նախատեսվել են նաև կանխիկ եղանակով գործառնությունների իրականացման մի շարք պահանջներ և սահմանափակումներ:

Անկանխիկ վճարումների համար բարենպաստ պայմաններ ստեղծելու նպատակով ՀՀ կենտրոնական բանկի իրականացրած աշխատանքների արդյունքում վճարային քարտի անդրդրագիրը ճանաչվել է որպես ծախս հիմնավորող փաստաթուղթ:

2007 թ. ՀՀ կենտրոնական բանկը, կարևորելով վճարային համակարգերի հսկողության դերը և ազդեցությունը ֆինանսական համակարգի կայունության վրա, սերտ համագործակցել է Նիդեռլանդների կենտրոնական բանկի, ինչպես նաև Համաշխարհային բանկի նախաձեռնությամբ «ԱՊՐ Երկրների վճարահաշվարկային և արժեթղթերի հաշվառման համակարգի գործունեության համագործակցության» պատվիրակության (CISPI-Cooperation in the Commonwealth of Independent States Payments and Securities Settlement Initiative) փորձագետների հետ:

Համաշխարհային բանկի պատվիրակության հետ համատեղ աշխատանքների արդյունքում գնահատվել են ՀՀ վճարահաշվարկային և արժեթղթերի համակարգերը, որոնք, ըստ տրված գնահատականների, համապատասխանում են միջազգային չափանիշներին:

Հետամուտ լինելով արժեթղթերի շուկայի զարգացմանը՝ մշակվել և հաստատվել է «ՀՀ կենտրոնական բանկի կողմից բարձր վարկանիշ ստացած առևտրային կազմակերպությունների կողմից բողարկված պարտատոմսերով ռեպո գործարքների ռեպո հաշվարկի կատարման» պայմանագիրը, որը կարգավորում է կենտրոնական բանկի և առևտրային բանկերի միջև կնքված ռեպո գործարքների վերջնահաշվարկի իրականացման ընթացակարգերը:


Արժեթղթերի շուկայի զարգացման, այդ թվում՝ նաև գործարքների կնքման պվտոնատացման և արդյունավետության բարձրացման նպատակով մշակվել է ՀՀ պետական արժեթղթերով ռեպո և հակադարձ ռեպո գործառնությունների կնքման պվտոնատացված համակարգը, որը թույլ է տալիս իրականացնել ՀՀ կենտրոնական բանկի և առևտրային բանկերի միջև ռեպո և հակադարձ ռեպո գործառնությունների պվտոնատ կնքումը:

Հ ամապատասխան լրացումներ են կատարվել իրավական դաշտում, որոնց նպատակն է ապահովել վճարահաշվարկային կազմակերպությունների կողմից ծառայությունների նատուրացման հստակությունը և ամբողջականությունը, այդ թվում՝ լրացուցիչ պարզաբնել տվյալ կազմակերպությունների կողմից վճարային տերմինալների միջոցով վճարումների կատարման ընթացակարգերը:


<sup>6</sup> Վճարահաշվարկային համակարգի վերաբերյալ մամրամասն հաշվետվությունը ներկայացվում է «ՀՀ կենտրոնական բանկի բանբեր» եռանյա պարերականում, «Հայստանի ֆինանսական համակարգը. զարգացումը, կարգավորումը, վերահսկողությունը» տարեկան հաշվետվությունում և «Ֆինանսական կայունության հաշվետվությունում»:

## ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՅՈՒԹՅՈՒՆԵՐԻ ՄՎԿԱՐԴԱԿԸ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

2007 թվականի ընթացքում միջազգային պահուստները, նախորդ տարվա համեմատությամբ, ավելացել են շուրջ 55%-ով, ինչը կազմել է շուրջ 587 մլն ԱՄՆ դոլար: Արդյունքում տարեվերջին միջազգային պահուստների ծավալը կազմել է շուրջ 1659 մլն ԱՄՆ դոլար:




Հաշվետու տարում միջազգային պահուստներից ստացված եկամուտը կազմել է 67.1 մլն ԱՄՆ դոլար (նախորդ տարի՝ 37.6 մլն ԱՄՆ դոլար): Նախորդ տարվա համեմատ եկամտի շուրջ 82.5%-ով աճը մասամբ պայմանավորված է միջազգային պահուստների ծավալի աճով, մասամբ էլ՝ կատարված ներդրումների բարձր կատարողականով:



Ընդհանուր առմամբ, տարվա ընթացքում ՀՀ միջազգային պահուստների ակտիվների տեղաբաշխման դինամիկան համահունչ է եղել շուկաների հիմնական միտումներին: Մասնավորապես՝ ԱՄՆ-ում տոկոսադրույթների անկնան միտումների դրսնորմանը զուգընթաց, այս արժույթով պայուսակում արժեթղթերի տեսակարար կշիռը զգալի ավելացել է, մինչդեռ եվրոպեան և ՄԲ ֆունտ ստեն-լինգով պայուսակները առավելապես տեղաբաշխված են եղել ժամկետային ավանդներում, ինչն իր հերթին արդարացված է այս շուկաներում գերակայող տոկոսադրույթների աճի դինամիկայի պայմաններում: Արդյունքում՝ 2007 թվականի միջին տարեկան եկամտաբերությունը կազմել է 5.603%՝ նախորդ տարվա 4.57%-ի փոխարեն:

2007 թ. ընթացքում արժեթղթերի տեսակարար կշիռը միջազգային պահուստներում աճել է մոտ 3 անգամ՝ ապահովելով անախաղեա բարձր կատարողական՝ 6.82%:

Ավանդների տեսակարար կշիռը նվազել է կիսով չափ: Դրանց եկամտաբերությունը զիջել է արժեթղթերի կատարողականին շուրջ 143 բազիսային կետով, սակայն նույնպես ապահովել է եկամտաբերության բարձր մակարդակ՝ 5.39%:



Ըստ արժույթների՝ լավագույն կատարողական են դրսևորել ՌԴ ռուբլով ներդրումները՝ 6.85% տարեկան եկամտաբերություն: Վերջին տարիներին առաջին անգամ արձանագրվել է ԱԱՍ դոլարով և ՄԲ ֆունտ ստեղլինգով ներդրումների եկամտաբերության ամենաբարձր մակարդակը՝ համապատասխանաբար 5.98% և 5.75% տարեկան եկամտաբերություն:

Եվրոյով ներդրումների եկամտաբերության մակարդակը ամենացածրն էր՝ 3.95%, սակայն 2007 թ. ընթացքում ԱԱՍ դոլարի համեմատ Եվրոն արժևորվել է 10.5%-ով: ՌԴ ռուբլով և ՄԲ ֆունտ ստեղլինգի արժևորումը համապատասխանաբար կազմել է 6.8% և 1.3%:


Որդեգրելով առաջնակարգ կենտրոնական բանկերի լավագույն փորձը՝ ՀՀ կենտրոնական բանկում սահմանվել են միջազգային պահուստների կառավարման նոր սկզբունքներ: Նախ և առաջ, տարանջատվել են ռազմավարական և մարտավարական որոշումների ընդունման գործառությունները, սահմանվել է դրանց ընդունման պատասխանատվության բաշխման կարգը: ՀՀ ԿԲ խորհրդի կողմից հաստատվել են պահուստների կառավարման հիմնական սկզբունքները երկարաժամկետ՝ 3 տարի միջակայքի համար, իսկ այդ սկզբունքների ներքո կարճաժամկետ, մարտավարական որոշումների ընտրության իրավասությունը վերապահվել է ՀՀ ԿԲ ներդրումային հանձնաժողովին: Փոփոխվել են միջազգային պահուստների՝ ըստ պայուսակների բաժանման (տրանշինգի) և արժութային բաղադրությունների սահմանման սկզբունքները: Եական փոփոխության է ենթարկվել պայուսակի օպտիմալ բաղադրության ընտրության գործընթացը: Նոր գործող որոշումներով՝ ՀՀ ԿԲ խորհրդը սահմանում է, այսպես կոչված՝ «ռիսկի նկատմամբ իր հանդուրժողականության աստիճանը», որը նախանշում է երկարաժամկետ միջազգային պահուստների կառավարման ընթացքում շուկայական ռիսկի՝ ՀՀ ԿԲ համար ընդունելի սահմանները և այդ սահմաններում օպտիմալ եկամտաբերություն ապահովող ակտիվների տեղաբաշխման ընտրության տրամաբանությունը: Ակտիվների օպտիմալ տեղաբաշխման մարտավարական ուղենիշների ընդունման իրավասությունը դարձյալ տրվել է Ներդրումային հանձնաժողովին: Ուղենիշների հիմնական նպատակը եկամտաբերության մաքսիմալացումն է ավելի կարծ ժամանակահատվածում, և այդ որոշումների հիմքում, ի տարբերություն ռազմավարականների, դրվում են շուկայի ընթացիկ միտումները և կանխատեսումները, որի ապահովման համար կատարելագործվել են նաև հաշվարկման մեթոդները:

Բացի վերոնշյալց՝ ուղենիշներում սահմանվել է պասիվ կառավարման սկզբունքը, որի համաձայն պայուսակների փաստացի կառուցվածքը և ռիսկայնության ցուցանիշները նախատեսվածից չպետք է շեղվեն 5 տոկոսից ավելի չափով: Այս սկզբունքին համապատասխան, հունիսից սկսած՝ ՀՀ միջազգային պահուստների ակտիվների տեղաբաշխման փոփոխությունները, ինչպես նաև եկամտաբերության ցուցանիշի կատարողականը գրեթե ամբողջությամբ պայմանավորված են եղել ուղենշայինով:

Փաստացի պայուսակների կառավարումն իրականացվում է ուղենշային ինդեքսների կրկնօրինակնան (ռեպլիկացիայի) սկզբունքով, ինչը ենթադրում է ռիսկայնության ցուցանիշների հնարավորինս մոտարկում: Ռեպլիկացիան իրականացվում է պայուսակի և ուղենիշի միջև դոլարային դուրացիայի (DV01) տարբերության նվազեցման սկզբունքով: Նշենք, որ ըստ անսական վերահաշվեկշռման արդյունքների՝ փաստացի պայուսակների DV01-ների տարբերությունը ուղենշայինների համեմատ կազմել է մոտ 50 ԱՄՆ դոլար՝ յուրաքանչյուր 100 մլն ԱՄՆ դոլարի համար: Դա նշանակում է, որ եկանտարբերության կորի 1 բազիսային կետով գուգահեռ բարձրացման դեպքում փաստացի պայուսակի արժեքը յուրաքանչյուր 100 մլն ԱՄՆ դոլարի համար կնվազի ընդամենը 50 ԱՄՆ դոլարի չափով ավելի շատ, քան սահմանված ուղենշային պայուսակի արժեքը:

## ԿԱՆՆԻԿ ԴՐԱՄԱՇՐՋԱՆԱՊՈՒԹՅՈՒՆԸ

2007 թվականին շարունակվել է տնտեսության դրամայնացման ակտիվ գործընթացը և դրանով պայմանավորված կանխիկ դրամի նկատմամբ տնտեսության մեջ պահանջարկը: Դեկտեմբերի 31-ի դրույթամբ ՀՀ կենտրոնական բանկից դուրս գտնվող կանխիկի ծավալը կազմել է 350.3 մլրդ դրամ, այսինքն՝ տարվա ընթացքում տեղի է ունեցել 54.4 % աճ:




ՀՀ ԿԲ դրամական պահուստները բավարարել են տնտեսությունում կանխիկ դրամի նկատմամբ ձևավորված պահանջը:

Ինչպես նախորդ տարի, փողի զանգվածի համեմատ շրջանառությունում կանխիկ դրամի ծավալի աճի առաջանցիկ տեմպերը հանգեցրել են փողի զանգվածում կանխիկի տեսակարար կշռի ավելացմանը: Տարեվերջի դրույթամբ բանկային համակարգից դուրս կանխիկ դրամը կազմել է փողի զանգվածի 47.2%-ը՝ նախորդ տարվա 43.5%-ի փոխարեն:


2007 թ. շրջանառության մեջ գտնվող կանխիկ դրամի ծավալի մեջ աճին գուգահեռ՝ 35.7%-ով ավելացել է նաև ՀՀ ԿԲ դրամարկղային շրջանառության ծավալը: Ընդ որում, ՀՀ ԿԲ տարածքային դրամարկղային կենտրոններն ապահովել են ընդհանուր դրամարկղային շրջանառության 25.1%-ը՝ նախորդ տարվա 18.9 %-ի փոխարեն:

Նախորդ տարվա համեմատությամբ՝ շուրջ 2 անգամ ավելացել է Վանաձորի և 2.5 անգամ՝ Քրազդանի (Ծաղկաձորի) տարածքային դրամարկղային կենտրոնների դրամարկղային շրջանառության ծավալը:




Տարածքային դրամարկղային կենտրոնների դրամարկղային ընդհանուր շրջանառության 93%-ը կազմել են կանխիկ դրամի ելքերը, որոնք տրամադրվել են հանրապետության տարածքում և ԼՂՀ-ում գործող բանկերին ու դրանց մասնաճյուղերին:

Նմանատիպ առանձնահատկություն է ունեցել նաև առևտրային բանկերի դրամարկղային շրջանառությունը. բացի Երևանից՝ հանրապետության մարզերում և ԼՂՀ-ում գործող առևտրային բանկերի և դրանց մասնաճյուղերի հրականացրած դրամարկղային ելքերը գերազանցել են մուտքերը:



Ծրջանառության մեջ կանխիկի աճը հիմնականում ապահովվել է 20000 դրամ և 50000 դրամ անվանական արժեքներով թղթադրամների հաշվին: Տարվա ընթացքում դրանց ծավալը շրջանառության մեջ ավելացել է համապատասխանաբար 2.5 և 1.8 անգամ: 10000 դրամ անվանական արժեքով թղթադրամի ծավալը շրջանառությունում աճել է 26.6%-ով:


Ինչպես նախորդ տարիներին, շրջանառության մեջ կանխիկի տեսակային կառուցվածքում առավել մեծ տեսակարար կշիռ են կազմել 5000 դրամ, 10000 դրամ և 20000 դրամ անվանական արժեքներով թղթադրամները: Տարեվերջին այս թղթադրամները միասին կազմել են ՀՀ ԿԲ-ից դուրս գտնվող կանխիկի 85%-ը՝ նախորդ տարվա 83%-ի փոխարեն:



Ծրջանառության մեջ 17%-ով ավելացել է մետաղադրամների ծավալը, առավելացնելով աճը՝ 500 որամանոց նետարարության ծավալը (34%-ով):

Ծրջանառության մեջ գտնվող կանխիկ դրամի տեսակային կառուցվածքի նշված փոփոխությունների արդյունքում «պայմանական միջին դրամանիշը»<sup>7</sup> տառելետոհին ևսամել է 2549 ռոպամ:

<sup>7</sup> «Պայմանական միջին դրամանիշի» հաշվարկի մեջ ներառվել են 10-ից 50000 դրամ անվանական սովորական մեջությունը՝ ՅԵ գործադրությունը:



### Հուշադրամների թողարկում

2007 թվականին ՀՀ կենտրոնական բանկը թողարկել է թանկարժեք մետաղներից պատրաստված մի շարք հուշադրամներ, որոնք նվիրված են տարբեր հիշարժան իրադարձությունների:


ՀՀ կենտրոնական բանկի կողմից թողարկվել են հետևյալ հուշադրամները.

- Ժամանակակից գույքուն անվանումը՝ «Հայոց բանակի կազմավորման 100-ամյակ» (Գառնիկ Զուլումյան, 1907-2000 թթ.) ծննդյան 100-ամյակին նվիրված՝ 10000 դրամ անվանական արժեքով «Ժամանակակից գույքուն անվանումը՝ «Հայոց բանակի կազմավորման 100-ամյակ») ոսկե հուշադրամը,
- Հայոց բանակի կազմավորման (1992 թ. հունվարի 28) 15-ամյակին նվիրված՝ 10000 դրամ անվանական արժեքով «Հայոց բանակի կազմավորման 15-ամյակ» ոսկե հուշադրամը,
- Հայկ Նահապետին նվիրված՝ 5000 դրամ անվանական արժեքով «Հայկ Նահապետ» ոսկե հուշադրամը,
- Շուշիի ազատագրման 15-ամյակին նվիրված՝ 10000 դրամ անվանական արժեքով «Շուշիի ազատագրման 15-ամյակ» ոսկե հուշադրամը,
- Հայաստանի բուսական և կենդանական աշխարհին նվիրված թեմատիկ շարքի շրջանակներում՝ 1000 դրամ անվանական արժեքով «Խաղող» արծաթե հուշադրամը,
- Երևանի Մեսրոպ Մաշտոցի անվան մատենադարանի հիմնադրման 50-ամյակին նվիրված՝ 1957 դրամ անվանական արժեքով «Մատենադարանի հիմնադրման 50-ամյակ» արծաթե հուշադրամը,
- «Կովկասի կենդանական աշխարհ» միջազգային ծրագրով՝ առաջավորական ընծառյութ, լայնաթիթ բաղ, հայկական իժ և իշխան պատկերող՝ 100 դրամ անվանական արժեքով արծաթե հուշադրամները,
- «Կենդանակերպի նշաններ» միջազգային ծրագրով՝ «Այժեղջյուր», «Ջրհոս» և «Ջկներ» արծաթե հուշադրամները՝ 100 դրամ անվանական արժեքով:

### Դրամանենգության դեմ պայքար

Տարվա ընթացքում ՀՀ կենտրոնական բանկը հայտնաբերված կեղծ թղթադրամների յուրաքանչյուր դեպքի մասին տեղեկացրել է ՀՀ տարածքում գործող բանկերին և ՀՀ ոստիկանության համապատասխան մարմիններին:

<sup>1</sup> Այլ մետաղադրամներն են՝ 10, 20, 50 լրամ, 1, 3, 5 դրամ և 100 դրամ անվանական արժեքով՝ շարենց-100, Հայսմատի 32-րդ օլիմպիադա մետաղադրամները, ինչպես նաև 25000 դրամ անվանական արժեքով «Անահիտ» ոսկեդրամը:




2007 թվականին ակտիվացել է մետաղադրամների կեղծումը: Հայտնաբերված կեղծ դրամանիշերի մեջ քանակային առումով ամենամեծ տեսակարար կշիռն ունեցել են 200 և 500 դրամանոց մետաղադրամները և 1000 դրամ անվանական արժեքով թղթադրամը:

## ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԱՐԿԱՆՉՈՒՄ

2004 թվականից ՀՀ կենտրոնական բանկը ծեռնարկել է Հայաստանի առևտորային կազմակերպությունների վարկանշմանն ուղղված աշխատանքները, և արդեն 2005 թ. սեպտեմբերին հրապարակվել են առաջին 16 կազմակերպությունների վարկանիշերը:

Կենտրոնական բանկի կողմից առևտորային կազմակերպությունների վարկանշման հիմնական նպատակը այդ կազմակերպությունների ներգրաված պարտավորությունները ժամանակին և ամբողջ ծավալով սպասարկելու (նարելու) ունակության՝ վարկունակության ներուժի վերաբերյալ օբյեկտիվ և անաչափ գնահատականի ներկայացումն է:

Վարկանիշերը շնորհվում են հայկական այբուբենի տառերով, ընդ որում, առավելագույն վարկանիշ է համարվում «Ա+», իսկ նվազագույնը՝ «Զ» վարկանիշը: Համաձայն «ՀՀ ԿԲ կողմից առևտորային կազմակերպությունների վարկանշման կարգի»՝ «Ա+»-ից «Գ-» վարկանիշերը համարվում են ներդրումային վարկանիշեր, իսկ «Դ+»-ից «Զ» վարկանիշերը՝ ոչ ներդրումային վարկանիշեր: Սկզբնական շրջանում ՀՀ ԿԲ-ն վարկանշում էր միայն արդյունաբերական, հյուրանոցային գործունեությամբ զբաղվող և հանրային ծառայություններ մատուցող առևտորային կազմակերպություններին, իսկ 2007 թվականի սկզբից վարկանշման գործընթացում ներգրավվել են նաև առևտորով և շինարարությամբ զբաղվող առևտորային կազմակերպությունները:



2005-2007 թթ. վարկանշված կազմակերպությունների թիվը 26-ից դարձել է 42, իսկ հրապարակված վարկանիշների քանակն ավելացել է 16-ից՝ 39:<sup>8</sup>

2007թ-ին վարկանշվել են 9 կազմակերպություններ: Վերավարկանշման արդյունքում 16 կազմակերպության վարկանիշ բարձրացվել է, 4 կազմակերպության վարկանիշ՝ իջեցվել, իսկ 14-ը մնացել է անփոփոխ:

2007 թ. տարեվերջի դրությամբ ոչ մի կազմակերպության չի շնորհվել «Ա» խմբի վարկանիշ: «Բ» խմբի վարկանիշ է ստացել 14 կազմակերպություն նախորդ տարվա 11-ի փոխարեն, «Գ» խմբի վարկանիշ է ստացել 22 կազմակերպություն՝ նախորդ տարվա 15-ի փոխարեն, և «Դ» խմբի վարկանիշ ստացած կազմակերպությունների քանակը 7-ից նվազել է 6-ի:

2007 թվականին վարկանշված կազմակերպություններից չորսը թողարկել են պարտատոմներ («Են կոնցեռն» ՓԲԸ՝ 2, «Արմենիան քափը փրոգրամ» ՓԲԸ՝ 1, «Հայռուսգազարդ» ՓԲԸ՝ 1, «Կալլետոտ» ՍՊԸ՝ 2 թողարկումներ): Թողարկումների ընդհանուր ծավալը կազմել է 2470 մլն դրամ:

2007 թվականին տեղի է ունեցել վարկանշման հաճանաժողովի վեց նիստ, որոնցում ընդունվել են որոշումներ առանձին կազմակերպությունների վարկանշման, կանոնակարգող հրապարական ակտերում և մեթոդաբանության մեջ փոփոխությունների ու լրացումների կատարման վերաբերյալ:

<sup>8</sup> Վարկանշված առևտորային կազմակերպությունների ամբողջական ցանկը ներկայացված է ՀՀ կենտրոնական բանկի ինտերնետային կայքում (<http://www.cba.am>):

## ՓՈՂԵՐԻ «ԼՎԱՑՄԱՆ» ԵՎ ԱՅԱԲԵԿՉՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՎՈՐՄԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԸ

2007 թվականին ֆինանսական դիտարկումների կենտրոնը (ՖԴԿ), որպես ՀՀ կենտրոնական բանկի առանձնացված կառուցվածքային ստորաբաժանում, փողերի «լվացման» և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի ոլորտում իրեն վերապահված գործառույթների շրջանակում իրականացրել է ակտիվ աշխատանքներ: Կատարված աշխատանքների հրապարակայնության ապահովման նպատակով ՖԴԿ-ն, հաշվի առնելով ՖԱԹՖ-ի 26-րդ չափորոշիչների պահանջները, հրապարակել է 2007 թ. գործունեության վերաբերյալ տարեկան հաշվետվություն, որը տեղադրվել է կենտրոնի պաշտոնական ինտերնետային կայքում ([www.cba.am/fmc/index.htm](http://www.cba.am/fmc/index.htm)):

ՖԴԿ-ն տարվա ընթացքում աշխատանքներ է իրականացրել հետևյալ հիմնական ուղղություններով:

### ■ **Փողերի «լվացման» և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի ոլորտում ՀՀ օրենսդրության և այլ իրավական ակտերի բարեփոխումներ**

Հաշվետու ժամանակահատվածում ՖԴԿ կողմից մշակվել և ՀՀ Ազգային ժողով են ներկայացվել «Փողերի «լվացման» և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի նոր նախագիծը, համապատասխան իրավական ակտերում փոփոխություններ ու լրացումներ կատարելու մասին օրենքների նախագիծը:

2007 թ. իրականացվել են նաև պարտադիր տեղեկացման ենթակա և կասկածելի գործարքների մասին հաշվետվական ձևերի վերանայման աշխատանքներ:

### ■ **Տեղեկատվական հավաքագրում, վերլուծություն, տրամադրում և փոխանակում**

2007 թ. ՖԴԿ տեղեկատվական շտեմարանում տեղեկատվությունը 2006 թ. համեմատ ավելացել է շուրջ 41%-ով, շտեմարանում առկա հաշվետվությունների քանակը կազմել է մոտ 130 հազար:

Բացի հաշվետվություն տրամադրող անձանց կողմից ներկայացված պարտադիր տեղեկացման ենթակա գործարքներից, այդ անձանցից ստացվել է կասկածելի գործարքների մասին 27 հաշվետվություն: Իր հերթին՝ իրավապահ մարմիններից ստացվել է 13 հաղորդագրություն և հարցում:

2007 թ. հունիսից անդամակցելով օտարերկրյա ֆինանսական հետախուզության մարմինների (ՖՀՄ) եգմոնտ խնբին՝ ՖԴԿ-ն կատարել է 20 հարցում, որոնց կապակցությամբ ստացել է 18 պատասխան: Բացի այդ, օտարերկրյա ՖՀՄ-ներից ստացվել է 19 հարցում, որոնց սահմանված ժամկետներում տրվել են պատասխաններ:

### ■ **Ներպետական համագործակցություն**

Հաշվետու տարում ՖԴԿ նախաձեռնությամբ գումարվել է «Հայաստանի Հանրապետությունում դրամանենգության, պլաստիկ քարտերի և այլ վճարային գործիքների բնագավառում գեղջարադրության, փողերի «լվացման», ինչպես նաև ահաբեկչության ֆինանսավորման դեմ տարվող պայքարի հարցերով» միջգերատեսչական հանձնաժողովի 4 նիստ, որոնց ընթացքում քննարկվել են փողերի «լվացման» և ահաբեկչության ֆինանսավորման կանխարգելմանը վերաբերող առավել հրատապ հարցերը:

### ■ **Ուսուցում և վերապատրաստում**

2007 թ. ՖԴԿ-ն փողերի «լվացման» և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի ոլորտում տարբեր ուսուցման և վերապատրաստման ծրագրեր է կազմակերպել ֆինանսական հաստատությունների, ինչպես նաև վերահսկող և հրավապահ մարմինների համար:

## 2008 ԹՎԱԿԱՆԻ ԱՐԴԻՎԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

«ՀՀ

կենտրոնական բանկի համար 2008 թ. արդիական են համարվում հետևյալ խնդիրները.

- Գնաճի նպատակային թիրախը ապահովելու նպատակով շարունակել դրամավարկային քաղաքականության առնչվող որոշումների ընդունմանը նպաստող գործընթացների որակի և արդյունավետության բարձրացումը, խորությամբ ուսումնասիրել գնաճի բնույթը և նպաստել գնաճի նպատակադրման քաղաքականության կատարելագործմանը:
- ՀՀ կենտրոնական բանկում ներդնել միջազգային պայուսակների ակտիվ կառավարման հիմունքները, ինչը թույլ կտա ավելի բազմազանեցնել միջազգային պահուստների պայուսակները և ստանալ հավելյալ եկամուտ:
- ՀՀ կառավարության 2008-2012 թթ. գործունեության ծրագրին համապատասխան՝ մշակել «Հայաստանը տարածաշրջանային ֆինանսական կենտրոն դարձնելու հայեցակարգ»:
- Իրականացնել լայնածավալ միջոցառումներ՝ ուղղված ֆինանսական ծառայությունների սպառողների շահերի պաշտպանությանը:
- Մշակել բանկերի ռիսկայնության գնահատման նոր համակարգ՝ հիմնված գործունեության առանձին տեսակների ռիսկերի տարանջատման, գնահատման և կառավարման մակարդակի վերլուծության վրա:
- Մշակել «Բանկերի կողմից երաշխավորված պանդների և ավանդատունների վերաբերյալ էլեկտրոնային տեղեկատվական համակարգի ձևավորման, վարման, տվյալների պահպանման և ՀՀ կենտրոնական բանկին տրամադրման» կարգը:
- «Ակտիվների արժեթղթավորման և ակտիվներով ապահովված արժեթղթերի մասին» և «Ապահովված հիփոթեքային պարտատոմսերի մասին» ՀՀ օրենքների նախագծերի ընդունման դեպքում իրականացնել համապատասխան ենթաօրենսդրական դաշտ ձևավորելու աշխատանքներ:
- Մշակել «Ավտոտրանսպորտային միջոցների շահագործման հետևանքով երրորդ անձանց պատճառված վնասներից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքի նախագիծը և դրանից բխող այլ օրենքների նախագծեր:
- Բժշկական ապահովագրության ոլորտի զարգացումը խթանելու նպատակով ՀՀ առողջապահության նախարարության հետ հանատեղ մշակել «ՀՀ առողջապահության ոլորտում միասնական տեղեկատվական շտեմարանի վերաբերյալ հայեցակարգ»:
- Մշակել «Ապահովագրական ընկերությունների տեղերում ստուգումների իրականացնան վերահսկողության ձեռնարկ»:
- Շվեդական բորսայական օպերատոր OMX-ի (Օ-Էմ-Էքս) հետ շարունակել Հայաստանի արժեթղթերի շուկայի զարգացման հեռանկարների ուսումնասիրության և զարգացման առաջարկությունների ծրագրի իրականացումը:
- Մշակել 2007 թվականի հոկտեմբերի 11-ին ընդունված «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքից բխող ենթաօրենսդրական ակտերը և փոփոխություններ կատարել համապատասխան իրավական ակտերում:

- Մշակել ներդրումային հիմնադրամների գործունեությունը կարգավորող օրենսդրություն և վերամշակել բաժնետիրական ընկերությունների վերաբերյալ օրենսդրությունը:
- Շարունակել ակտիվ մասնակցությունը կենսաթոշակային համակարգի բարեփոխումների աշխատանքներին:
- Բանկերում իրականացնել Բազել 2-ի պահանջների ներդրում, ֆինանսական խմբերի միասնական ռիսկերի և ռիսկերի կառավարման գործնրացների գնահատում:
- Վարկային կազմակերպություններում գնահատել ներքին հսկողության համակարգերը:
- Ապահովագրական ընկերություններում սկսել ակտուարական ինստիտուտի ձևավորման և ապահովագրական ընկերությունները համապատասխան նասնագետներով հաճարելու գործընթացը՝ առավելապես ուշադրություն դարձնելով ռիսկերի կառավարմանը, կադրային քաղաքականությանը, տեղեկատվական տեխնոլոգիաների բավարար մակարդակի ապահովմանը (հաշվապահական գործուն ծրագրեր, տեղեկատվական անվտանգություն և այլն), ապահովագրական ընկերությունների նկատմամբ ապահովադիրների վստահության անրապնդմանը, շուկայի ենթակառուցվածքների ձևավորմանը, օտարերկրյա ներդրումների խթանմանը:
- «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքով սահմանված՝ կորպորատիվ ֆինանսների վերաբերյալ իրապարակային առաջարկությունների, հաշվետու թողարկողների կողմից բացահայտման ենթակա տեղեկատվությունների, օրենսդրության շրջանակներում հաշվետու թողարկողների կորպորատիվ հարաբերությունների նկատմամբ սահմանել վերահսկողություն:
- Աջակցել իրապարակային առաջարկով հանդես եկող անձանց, նշված գործընթացը իրականացնելու նպատակով շարունակել համագործակցությունը ՕՄХ-ի հետ:
- «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքին և ենթաօրենսդրական ակտերին համապատասխան՝ իրականացնել արժեթղթերի շուկայի մասնակիցների վերագրանցումը և վերալիցենզավորումը, ինչպես նաև կանխարգելիչ և շուկայի վարվելակերպի վերահսկողության համակարգերի ներդրումը:
- Փոխանակման կետերում անցկացնել ծառայությունների մատուցման որակի գնահատում, ստուգել վերջիններիս գործունեության համապատասխանությունը ՀՀ օրենսդրությանը:
- Հայաստանի Հանրապետությունում իրականացնել անկանխիկ շրջանառությունը խրախուսող միջոցառումներ, ապահովել վճարային համակարգերի հսկողության բավարար մակարդակ:
- Նախաձեռնել բանկային համակարգում կանխիկ դրամով իրականացվող գործառնությունների ընթացքում հնարավոր ռիսկերի նվազեցման, ՀՀ կենտրոնական բանկի նոր կառուցվող դրամարկղային հանգույցի տեխնիկական հագեցվածության, ինչպես նաև դրամարկղային հանգույցում աշխատանքային գործընթացների կազմակերպման աշխատանքներ:
- Շարունակել ԱՄՀ կողմից սահմանված թափանցիկության համաշխարհային չափորոշիչներին համապատասխանության ուղղությամբ տարվող աշխատանքները:

- Նախատեսել կրթական ծրագրեր՝ տնտեսական թեմաներ լուսաբանող լրագրողների և հանրակրթական դպրոցներում «տնտեսագիտություն» դասավանդող ուսուցիչների համար, ինչպես նաև ընդհանուր ուղղվածության կրթական ծրագրեր՝ ֆինանսատնտեսական ոլորտի վերաբերյալ բնակչության տեղեկացվածության մակարդակը բարձրացնելու նպատակով:
- Անցկացնել հայկական դրամի 15-ամյակին նվիրված խոշոր միջոցառումներ, ինչպես նաև շարունակել ՀՅ կենտրոնական բանկի կողմից հրականացվող կրթական ծրագրերը:
- Մշակել ՀՅ կենտրոնական բանկի աշխատակիցների շահադրդման և մեծ ներուժ ունեցող աշխատակիցների հայտնաբերման սկզբունքներ և կիրառել դրանք, նվազեցնել կադրերի հոսունության ցուցանիշները, ներդնել վերապատրաստման արդյունքների գնահատման նոր մեխանիզմ:
- Ընդլայնել վարկանշված կազմակերպությունների թիվը և խթանել կորպորատիվ պարտատոմսերի նոր թողարկումները:
- Ֆինանսական դիտարկումների կենտրոնին վերապահված փողերի «լվացման» և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի գործառույթի իրականացումը փոխանցել նաև համակարգի այլ շահագրգիռ մասնակիցներին՝ ընդլայնելով ու խորացնելով փողերի «լվացման» և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարը:
- Իրականացնել Վերստուգիչ խմբի գործունեությունը զարգացնելու, միջազգային լավագույն փորձին համապատասխանեցնելու միջոցառումներ: